

Օ Ր Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը*)

Վ Է Գ

ԲՐՈՒՆ ԲԱՂԵՆԻ

—Ընդունեցիր:

—Այսինքն թէ, ի՞նչ ասել կուզէ, որ ես կապուած եմ նրա հետ: Անցեալ աշնանից, մանաւանդ չորս ամսից իվեր, ես պ. դը Ֆարնսովի սրտագին ուշադրութեան առարկան եմ դառել...

—Նա եր արդեօք այն ձիաւորը, որին պատահեցի ճանապարհի վրայ, աֆրիկացի, իմ վերադարձի երեկոյեան:

—Այո:

—Նա եր, վերջերս, մի ուրիշ սպայի հետ մեր գործարանըն այցելողը:

Այո, բայց ես տեսել եմ նրան գլխաւորաբար Ստրազբուրգի բարձր շրջաններում, երբ իմ հայրը ինձ տանում էր ընթերցանքի և պարահանդէսների... Դու գիտես որ մայրիկը իր խաբխուլ առողջութեան պատճառով, բայց մանաւանդ իր անհաշտ ատելութեամբ, դէպի այն բոլորը, ինչ գերմանական անուն է կրում, ընդհանրապէս հրաժարւում էր ինձ ընկերակցել... Իսկ պ. դը Ֆարնսով ընդհակառակը շատ մօտ էր ցոյց տալիս իրան, նա հետու չէր փախչում ալգասուհսւց...

Ես նրան հանդիպում էի շարունակ... Նա ինձ հետ ազատօրէն խօսելու բազմաթիւ առիթներ ունէր..., վերջապէս, երբ նա եկաւ այստեղ, յատկապէս նրա համար էր, որ իմ հօրից խնդրէ, թէ արդեօք ես կընդունէի՞ նրա ձեռքը, եթէ երբէք նա ինձ առաջարկուծիւն անէր ամուսնանալ: Եւ հէնց նոյն առաւօտեան, ճաշից յետոյ, ես պատասխանել տուի, որ այո՛...

—Ուրեմն հայրն հաճութիւն տալիս է:

*) Տե՛ս «Մուրճ» № 10

—Այո՛:

—Միւսները:

—Ոչինչ չգիտեմ: Եւ յայտնութիւնը, ինչպէս կարող ես երևակայել, սարսափելի պիտի լինի: Մայրիկը՝ Պապը՝ Ուլրիխ մօրեղբայրը՝ ես յոյս էի դրել քո օգնութեան վրայ, Ժան, և մտածում էի, որ դու ինձ կաջակցես յաղթելու համար արգելքներին, կ'աշխատես ինձ հետ բուժելու իմ բանալիք վէրքերը... Պէտք է որ նախ պ. դը Ֆարնուլին ծանօթացնենք մայրիկին, որ նրան չի ճանաչում... Ալշէյսում այդ անկարելի է դեռ ես... Մենք մտածում էինք ծանօթացումը կատարել Ստրազուրգում, մի երրորդ անձի տանը... Բայց եթէ ես ինձ դէմ պէտք է ունենամ մի թշնամի աւելի, էլ ի՞նչ կարիք կայ խօսելու իմ ծրագիրների մասին...

Նրանք կանգ առան: Ժան մի ըոպէ ընկղմուեց մտածութեան մէջ դիտելով իր առաջ տարածուող գարու և ցորենի դաշտը: Յետոյ մտածուեցն ու հայեացքը կենտրոնացնելով Լիւսիէնի վրայ, որ գլուխը բարձր բռնած, պաղատագին, խոռվուած, կրակոտ, սպասում էր նրա խօսքերին:

—Դու չես կարող իրեակայել թէ որքան տանջւում եմ ես: Դու խորտակեցիր իմ ամբողջ ուրախութիւնը:

—Իմ խեղճ բարեկամ, ես բոլորովին անտեղեակ էի քո սիրոյ մասին:

—Իսկ ես քաջութիւն չեմ դրում իմ մէջ խորտակելու քոնը...

Լիւսիէն փաթաթուեց Ժանի վզով:

—Ո՞րքան վեհանձն ես, իմ Ժան, ռըքան բարի ես:

Ժան նրան հեռացրեց և ասաց թաղծութեամբ.

—Ո՛չ այնքան վեհանձն, այնքան բարի, որքան կարծում ես, Լիւսիէն, որովհետեւ դա կապացուցանէր իմ տկարութիւնը: Ո՛չ ես քո վարմունքը չեմ հաւանում: Ո՛չ ես չեմ հաւատում, որ դու կարող ես երջանիկ լինել...

—Բայց գոնէ դժու ինձ ազատ կը թողնես, չէ՞: Դու ինձ չես հակառակուի, չէ՞: Դու ինձ կը պաշտպանես մայրիկի առաջ:

—Այո, քանի որ դու արդէն Ֆարնուլին տուել ես քո համաձայնութիւնը, քանի որ հայրս տուել է նոյնպէս իր հաւանութիւնը, և քանի որ մայրիկի ընդդիմութիւնը կարող էր աւելի մեծ դժբախտութիւնների ծնունդ տալ...

—Իրաւունք ունես, Ժան, աւելի մեծ դժբախտութիւնների, որովհետեւ հայրս ինձ ասաց...

—Այո, գուշակում եմ, նա ասաց որ պիտի ջախջախէր

ամեն ընդդիմութիւն, որ նոյնիսկ աւելի շուտ պիտի նախընտրէր մօրիցս բաժանուել, քան տեղի տալ նրա կամքի առաջ... Դա շատ հաւանական է... Նա այդ կանի: Ես, հետեւաբար, նրա դէմ ոչ մի կռիւ չպիտի մղեմ... Միայն թէ ես ոչ մի յանձնառութիւն չեմ վերցնում ինձ վրայ հանդէպ դը Ֆարնովի:

— Ի՞նչ ես ուզում ասել, հարցրեց Լիւսիէն թափով:

— Ես կամենում եմ, պատասխանեց Ժան մի այնպիսի հեղինակաւոր շեշտով, ուր Լիւսիէն զգաց իր եղբօր անյաղթելի վճիռը, ես կամենում եմ որ նա բացարձակապէս իմանայ ինչ որ խորհում եմ: Ես կը գտնեմ միջոց բացատրուելու նրա հետ: Եթէ նա նորից յամառի քեզ հետ ամուսնանալու իր որոշումի մէջ, նա գոնէ չի խաբուի այն ահադին տարբերութեան մասին, որ գոյութիւն ունի նրա և իմ զգացումների և գաղափարների միջև:

— Այդ բանում, ես բոլորովին համաձայն եմ քեզ հետ, ասաց Լուսիէն, յանկարծ կատարելապէս վստահացած և միևնոյն ժամանակ ժպտաց, որովհետեւ համոզուած էր, որ այդ դը Ֆարնովը պիտի դիմադրէր Ժանի խորհուրդներին և այնուամենայնիւ չպիտի հրաժարուէր ամուսնութիւնից:

Դէմքը դարձրեց դէպի Ալշէյմ: Յաղթանակի մի ճիշ բարձրանում էր դէպի շրթունքները: Բայց զսպեց նրան: Մի քանի բոպէ մնաց լուռ, արագ արագ շնչելով, շղազը գոռած, և որոնելով թէ աչքերով և թէ մտածումով թէ ի՞նչ կարող էր ասել արդեօք, որպէսզի չմատնէր իր յորդող երջանկութիւնը:

Յետոյ թափ տուեց գլուխը

— Խեղճ դուռն, բացականչեց: Այժմ երբ պէտք է նրանից բաժանուեմ, նա դառնում է ինձ համար թանգազին: Ես համոզուած եմ, որ ապագայում, երբ զարնիզոնի կեանքը ինձ կը հեռացնէ Ալզասից, Ալշէյմի պատկերը շարունակ անբաժան կը լինի իմ մտքից, նրան միշտ կը տեսնեմ երևակայութեամբ այնպէս ինչպէս այժմ տեսնում եմ այստեղից:

Դիւղը բարձրանում էր իր վարդազոյն կտուրներով այգեստանների միջից: Իր ծառերով նա կազմում էր մի կղզի ապրիլեան ցորենների և առոյտների մէջ: Փոքրիկ թռչուններ՝ լոյսից ոսկեգօծուած, թռչկոտում էին Ալշէյմի վրայ: Օրբերէնների տուեք, այդ հեռաւորութիւնից, միւսների հետ խառնուած, միացած էր երևում: Շրջապատող իրերի մէջ մի այնպիսի քաղցրութիւն կար, որ կարելի էր կարծել թէ կեանքն իսկ քաղցր է:

Լիւսիէն անձնատուր եղաւ այդ գեղեցիկ տպաւորութեան, որ զգում էր այժմ սիրային մտածումի հետեւանքով: Նա նորից լսեց իր սեփական խօսքերը. «Ալշէյմի պատկերը շարունակ

անբաժան կը լինի իմ մտքից, և ես նրան կը տեսնեմ երևակայութեամբ այնպէս, ինչպէս այժմ եմ տեսնում այստեղից:» Յետոյ Բաստիանների ծառերի կատարի ծփուն գիծը, որ բարձրանում էր որպէս մի փոքրիկ, կապտագոյն ամպ, վերջին պարտէզներից դէնը, յիշեցրեց նրան ժանի վիշտը: Նա այդ ըռպէին միայն նշմարեց, որ չէր պատասխանել. յուզուեց ոչ այն աստիճան, որ հրաժարուի իր սեփական երջանկութիւնից, ժանին երջանկացնելու համար, այլ այն ցաւից, իր պատճառով էր նրան իրանց սէրերի ընդհարումը: Նա կը ցանկանար մեղմացնել իր դարթած վիշտը, օրօրել նրան բառերով, քնեցնել նրան, չզգալ այլևս նրա ներկայութիւնը:

— Իմ ժան, իմ եղբայր ժան, ասաց, ես կը հատուցանեմ այն բոլորի փոխարէն, որ կանես ինձ համար, օգնել քեզ իմ ուժերի չափով: Ո՞վ գիտէ, թէ միասին աշխատելով՝ չպիտի լուծենք հարցը...

— Ո՞չ այդ հարցի լուծումը իմ և քո ոյժերից բարձր է:

— Օղիւր քեզ սիրում է: Այո, քեզ սիրում է, չէ՞: Ուրեմն դուք անյաղթելի կը լինէք...

Ժան յոգնութեան մի շարժում գործեց:

— Աւելորդ է, Լիւսիէն, վերադառնանք...

— Աղաչում եմ քեզ... Գոնէ պատմիր ինձ թէ ի՞նչպէս սիրեցիր նրան... Ես արժանի եմ հասկանալու այդ... Մենք որոշել էինք չբաւականանալ միայն անուններ յայտնելով միմիանց: Բացի ինձանից ո՞վ ունիս, որի առաջ կարողանաս բաց անել քո հոգին:

Լիւսիէն խղճարհուով էր իր եղբոր առաջ, նա մինչև անգամ նուաստացում էր գգում իրանց իր թաքուն երջանկութեամբ... Նա նորից հարց տուեց: Մեծ խանդաղատանքով վերաբերուեց, ճիշտ բառեր գտաւ նկարագրելու համար Օղիւրի երեսի գեղեցկութիւնը, և ժան խօսեց: Նա խօսեց, մէկից իր յոյսը հաղորդելու պէտքից դրդուած, յոյս՝ որ կուտ էր դեռևս չմեռնելու համար: Նա պատմեց Ջատիկուայ նախատօնակի դէպքերի մասին Սէնդ-Օղիւրում, պատմեց, թէ ի՞նչպէս հանդիպել էր երիտասարդ աղջկան, Աւագ Հինգզաթի, կեռասնիներ ծառուղու մէջ: Այնուհետև, մէկը միւսից յիշողութիւնը թարմացնելով, թուականները ճշտելով, բառեր յիշեցնելով խորասուզուեցին անցեալի մէջ, մինչև այն օրերը, երբ ազգականների միջև գծաւորութիւնները նոր էին ձայն տուել. երբ դրանք անծանօթ էին դեռևս որդիներից, անշմարելի. երբ արձակուրդների ժամանակ, Լիւսիէն, Օղիւր, ժան, կարող էին կարծել որ իրանց երկու ընտանիքները սերտօրէն միացած՝ կը շարունա-

կէին ապրել Ալշէյմ գիւղում իբրև յարգուած, սիրուած տէրեր: Լիւսիէն ուշք չէր դարձնում նոյն բանի մասին, թէ վերակոչելով երջանիկ անցեալի յուշերը, նա խոովում էր իր եղբօր միտքը: Նա այդ յուշերի ոգումից մի բոպէ հաճոյք զգաց, այն յուսով որ կարող է ներկան ընկղմել անցեալի մէջ, բայց անմիջապէս երկուսի հակասութիւնը աչքի էր խփել և ըմբոստացումը վերածնունել էր իր մէջ աւելի խորը, փոթորկելով իր հոգու բոլոր զօրութիւնները իր հօր, բրոջ դէմ, այն կեղծ կարեկցութեան դէմ, որի ետև թաքնւում էր Լուսիէնի զոհաբերութեան անկարողութիւնը: Երիտասարդը շուտով դադարեց պատասխանելուց իր բրոջ խօսքերին: Ալշէյմը մեծանում էր, և կազմում էր այժմ մի երկար և տեղ տեղ կոտորատուած ուրուագիծ: Խաղաղ գիշերուայ մէջ, Օրերլէների տունը՝ տակաւին նիհար ծառերի կատարների վերև բարձրացնում էր իր պահապան տանիքը: Երբ պարկի վանդակապատ դուռը՝ որ ամեն օր փակւում էր գործաւորների մեկնումից լետոյ, բացուեց երկու զբօսնողների առաջ, Ժան մի կողմ կանգնեց, հեգնական շեշտով փափաաց նրա ականջին.

—Համեցէք, բարոն ֆոն Ֆարնով, մտէք նախկին բողոքարկու պատգամաւոր Ֆիլիպ Օրերլէի տունը:

Նա պատրաստւում էր պատասխանելու: Բայց, ծառուղու աւաղի վրայ լսուեց զօրեղ ոտնաձայն. մի մարդ շուռ էր գալիս հսկայ կաղամախիների մի կոյտի առաջից. մի թռթռուն, հրամայողական ձայն, որը երգում էր երջանիկ, անվիշտ շեշտով սասաց:

—Ահա նրանք, այդ փոքրիկ սիրելիները: Ի՛նչ զբօսանք կատարեցիք զաւակներս: Գործարանի ջրվէժից տեսայ ձեզ դաշտում ինչպէս երկու սիրահարներ, միմիանց վրայ կռացած ման էիք գալիս:

Պ. Ժոզէֆ Օրերլէ քննեց երկուսի դէմքերը, և տեսաւ որ գոնէ Լիւսիէնի երեսը ժպտուն էր:

—Միմիանց գաղտնիքներ էիք հաղորդում, այնպէս չէ, շարունակեց նա: Գուցէ և մեծ գաղտնիքներ:

Լիւսիէն իր եղբօր ցասկոտ վշտից նեղացած՝ իսկոյն պատասխանեց.

Այո, ես խօսեցի Ժանի հետ: Նա հասկացաւ իմ դրութիւնը: Նա չպիտի ընդդիմանայ ինձ:

Հայրը շտապագին սեղմեց իր որդու ձեռքը:

—Ես այդ ազնւութիւնը գիտէի որ կունենայ նա: Շարունակել են, Ժան: Ես չեմ կարող մոռանալ քո վարմունքը:

Իր ազատ ֆրացած ձախ ձեռքով բռնեց Լիւսիէնի ձեռքը,

և հերև երջանիկ հայր, իր երկու զաւակներէց շրջապատուած, մանուածապատ մեծ ծառուղով, որով գնում էին կառքերը, անցաւ պարկից:

Մի կին՝ սրահի ապակիների ետեւից նրանց գալը տեսաւ, և շատ խղճով ուրախութիւն միայն դգաց այդ ընտանեկան տեսարանից: Նա մտածում էր որ հօր և զաւակների միութիւնը կատարուել էր վերջապէս իր դէմ:

— Գիտես, իմ սիրելի ժան, տարւած էր հայրը՝ գլուխը վեր վերցնելով և դղեակի ճակատը զննելով, գիտես որ ես ուզում եմ խնայել դիւրադգաց արժանապատուութիւնները. պատրաստել հարցերի լուծումը և բռնի ընդունել տալ միայն այն դէպքում, երբ այլապէս անկարելի է: Մենք հրաւիրուած ենք Բրաւսիգի կողմից...

— Ահ, վերջապէս հրաւիրել է:

— Այո, ընթրիքի, մի բաւական բազմամարդ երեկոյթի: Ինձ թւում է պ. դը Ֆարնովին քո մօր ներկայացնելու համար: Այդ ծանօթացումից յետոյ միայն կը խօսեմ քո մօր հետ: Եւ դրա տպաւորութիւնները վրայ հի մի ճնշում գործ չընելու համար ես ամեն ինչ քեզ պիտի յանձնեմ, քեզ պիտի յանձնեմ Լուսիէնի ապագան... Այդ սիրելի փոքրիկի, որի երջանկացնելը իմ երազն է կազմում... Ոչ մի խօսք պապին, այնպէս չէ: Ամենից յետոյ կիմանայ նա բոլորը. և ասել, որ դործը արդէն ուղղակի չի վերաբերում նրան...

Վերնադասթի առաջ տարածուող դատարկ, մեծ տարածութիւնը, երկար ժամանակից իվեր չէր տեսել մի այդքան սերտօրէն միացած խմբի՝ իր հարթ հաւասար աւաղի վրայ կոխոտելու: Սրահում, մի քիչ յետ քաշուած՝ ջանալով վստահութեան փոքր նշույլ պահել իր հոգում և չյաջողելով՝ տիկին Օրերլէ դադարել էր աշխատելուց: Գորգը ընկել էր գետնի վրայ: Ժան խորհում էր:

«Ես պէտք է օգնեմ ուրեմն այդ տեսակցութեան, պէտք է դէպի մայն մղեմ մայրիկին որ ոչինչ չի կասկածում այդ մասին: Ի՞նչ դեր եմ խաղալու, որպէսզի խուսափենք աւելի մեծ դժբախտութիւններից... Բարեբախտաբար, մի օր, երբ նա՝ ամեն ինչ իմանայ, ինձ պէտք է ների»:

Երեկոյեան, շատ ուշ, իր որդուն համբուրելով՝ տիկին Օրերլէ հարցնում էր.

— Հայրդ պնդում է, որ Բրաւսիգները հրաւէրը ընդունում եմ: Դու էլ պիտի գնաս, սիրելի զաւակ:

— Այո, մալրիկ:

—Այդ դէպքում, ես էլ համաձայն եմ գնալու:

X

Բրաւսիգ խորհրդականի տան ընթրիքը

Ժամի 7-ին, ներքին խորհրդական պ. Բրաւսիգի բոլոր հիւրերը հաւաքուել էին կապոյտ սրահում,—Թաւշեայ ծածկոցներով և ոսկեզօծ փայտերով,—որ պաշտօնեան փոխադրել էր իր հետ ընակութիւն հաստատած ալլեայլ՝ քաղաքներում: Պ. ներքին խորհրդական Բրաւսիգ մի սաքսոն էր, հիւսնալի դաստիարակութեամբ, փայփայիչ ձևերով և շարժումներով: Նա սովորութիւն ունէր հակուելու միշտ այն կողմը, որից նրան դիպչում էին: Բայց կազմուածքը պինդ էր: Իր փոփոխամիտ ընաւորութեան հակառակ, անփոփոխ, լճացած էր իր մտքերով: Բարձրահասակ էր, շէկ, համարեա կոյր, երկար մազերով, կարճ, կարմիր և սպիտակ մօրուքով: Ակնոցներ չունէր, որովհետև նրա աչքերը ոչ կարճատես էին և ոչ հեռատես, այլ լոյսը սպառուած, կայծերը մարած էին և կրում էին տփռոյն ագաւորի դոյն: Շատախօս էր: Նրա մասնագիտութիւնը կայանում էր հաշտեցնելու ամենահակասական կարծիքները: Նրա նկարագիրը ամբողջապէս երևան էր գալիս իր պաշտօնավարութեան ժամանակ, դէպի ստորադասները պահպանած իր յարաբերութիւնների մէջ: Պ. Բրաւսիգ կայսերական ոգու տէր էր: Նա երբէք իրաւունք չէր տալիս մասնաւոր անհատներին: Պաշտօնական շրջաններում պնդում էին որ դիտաւորութիւն կար պ. Բրաւսիգին ազնուական դարձնելու: Եւ ինքը յաճախ կրկնում էր այդ ամեն տեղ: Կինը յիսուռն տարեկան էր, պատկառելի հասակով. երեւում էր որ նա երիտասարդութեան ժամանակ շատ գեղեցիկ է եղել. նախ քան Ստրազբուրգում ընակութիւն հաստատելը, նա ընդունել էր իր տանը գերմանական ութը քաղաքի պաշտօնեաներին: Նրա տուած ճաշերի ժամանակ նրա ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացած էր լինում սպասաւորների ծառայութեան վրայ և իր հիւրերի հարցերին պատասխանում էր միշտ անմիտ ֆրազներով:

Հրաւիրեալները կազմում էին ցեղերի և պարապմունքների այնպիսի մի խառնուրդ, որը դժուար կարելի էր գտնել գերմանական այլ քաղաքներում: Ո՛րքան օտար տարրեր կան ներկայումս Ստրազբուրգ քաղաքում: Հիւրերի թիւը տասնէնորս էր. ճաշասրահը հազիւ տասնեւեց հոգու համար լինէր:

Պարոն ներքին խորհրդականը իր մօտ, իր շուրջը ունէր

և նրանց վրայ իշխում էր իր անհամ ու տխուր գլխով—պաշտպանեալներ, յանձնարարուածներ կամ բարեկամներ, որոնք եկել էին կայսրութեան այլևայլ կողմերից. երկու պրիվա-դոցներ, պրուսացի, Ստրազբուրգի համալսարանից, յետոյ ալ-զասացի երկու երիտասարդ արուեստագէտներ, երկու նկարիչներ, որոնք մի տարուց իվեր աշխատում էին մի եկեղեցու որմանկարների վրայ. դրանք, չորսն էլ, անշուք հիւրերն էին. սրանց վրայ աւելանում էին երկու երիտասարդ Օբերլէններ. քոյր և եղբայրը, և մինչև անգամ մայրը, որը՝ պաշտօնական շրջաններում, նկատում էր իբրև սահմանափակ մտքի տէր անձ: Նշանաւոր հիւրերն էին պրոֆեսոր Կնէպպէ, Մեկկեն-բուրգի, զարգացած և ուշադիր միտք, խնամեալ հմտութեամբ, հեղինակ մի պատուական աշխատութեան, «Ընկերվարութիւնը՝ Պղատոնի գործերում» տիտղոսով, ամուսին՝ մի սիրուն խարտեաշ, կլոր և վարդագոյն կնոջ, որ աւելի ևս խարտեաշ, աւելի ևս վարդագոյն էր երևում իր ամուսնու ասորական, սև և խճուճ ձօրութի կողքին. գեղեցկագիտութեան, էսթէտիկայի պրոֆեսոր բարօն Ֆօն Ֆինկէն, բաղէնցի, որ ածելում էր իր երեսն ու ծնօտը՝ աւելի լաւ կարենալ ցոյց տալու համար ուսանողութեան ժամանակ վարած մենամարտների սպիները. նուրբ ու ջղուտ մարմին, կորովի գլուխ, վեր դարձրած քիթ, կրակոտ, կրքոտ, շատ ֆրանսատեաց միտք, և որը, ներկայ հիւրերի մէջ, ամենից աւելի մօտ էր սակայն ֆրանսիական տիպին, եթէ չհաշուենք ժան Օբերլէին: Տիկին Ֆօն Ֆինկէն գոյութիւն չունէր ընտաւ Բայց կար գեղանի տիկին Ռօզէնբաւտը, որը իր գեղեցկութեան և իր սրամտութեան պատճառով ամենից աւելի նախանձ էր յարուցանում, ամենից աւելի յարգանք էր ներշնչում, ամենից աւելի փնտրումէր Ստրազբուրգի գերմանական աշխարհում, և նոյնիսկ զինուորական շրջանակներում: Նա պրուսացի էր, Հոենսի ամբերից, ինչպէս իր ամուսինը՝ երկաթի մեծ վաճառական Կարլ Ռօզէնբաւտ, արշիմիլի-օնէր, արիւնային, բայց և այնպէս մէթօդիկ, լուռ անձնաւորութիւն, որը, ինչպէս պատմում էին, ծայրայեղ և սառը յանդգնութիւն էր ցոյց տալիս գործերի մէջ:

Այդ հրաւէրը նման էր այն բոլոր հրաւէրներին, որ տալիս էր Բրաւսիգ խորհրդականը, նրա հիւրերը ամենեւին նոյնատեսակ մարդիկ չէին: Բարձր պաշտօնատարը անուանում էր այդ՝ «հաշտեցնել երկրի զանազան տարրերը». նա ասում էր, որ իր տունը ներկայացնում է մի չեզոք հող և մի «ազատ բեմ», ուր կարող էր արտայայտուել ամեն կարծիք, Բայց շատ ալզասեցիներ կապածանքով էին վերաբերում

դէպի այդ ընտրողականութիւնն և այդ ազատութիւնը։ Ոմանք պնդում էին, որ պ. Բրաւսիգ խաղում էր պարզապէս մի դեր, և որ նրա տան մէջ արտասանուած ամէն բան անծանօթ չէր մնում երբէք ամենաբարձր շրջանակներին։

Տիկին Օրերլէ և իւր զաւակները՝ պ. ներքին խորհրդականի ամենաուշ համոզող հիւրերը եղան։ Գերմանացի հրաւիրեալները սիրալիրութեամբ ընդունեցին Լուսիէնին, որ նրանց մէջ գտաւ արդէն բաւական հին բարեկամներ։ Մօր վերաբերմամբ քաղաքավարի եղան. գիտէին որ նա պաշտօնական շրջանակներին այցելում էր միայն հարկադրուած. Վիլհէլմ Ֆօն Ֆալնով՝ որին ծանօթացրեց տիկին Բրաւսիգ, որը միայն տեղեակ էր սպայի մտադրութեան, գլխի հանդիսաւոր խոնարհուով բարեւեց մօր և աղջկան և յետոյ շտկուեց, հասակն ուղիղ ցցեց, և իսկոյն խառնուեց խմբուած մարդկանց, որ կանգնել էին հայելու մօտ։

Մի ծառայ լուր բերեց որ ճաշը պատրաստ է։ Սև հագուստների մի շարժում տեղի ունեցաւ դէպի առաջ, և հրաւիրեալները մտան մի ընդարձակ սենեակ, զարդարուած՝ Օրերլէների տան նման, յայտնի նախասիրութեամբ։ Բայց միևնոյն ճաշակը չեւ երևում այստեղ։ Ամբողջ դէկորացեան յիշեցնում էր գոթական արուեստը։

Ժան, որ ընտրողների այդ թափուրում վերջին եկողներէից մէկն էր, իր թևը տուել էր սիրուն տիկին Կնէպպլէին, որը շարունակ դիտում էր տիկին Ռոզենբլատի հիանալի կերպով պատրաստուած կօրսածը։ Պրոփեսոր Կնէպպլէի փոքրիկ կնոջն այնպէս թուաց, թէ Ժան Օրերլէ նոյնպէս հետաքրքրւում էր նոյն առարկայով։ Իսկոյն ասաց.

—Այդպիսի դէկօրտէ հագուստն անվայել է, այնպէս չէ։

—Իսկ ես գտնում եմ որ հիանալի է կարուած։ Ինձ թւում է որ տիկին Ռօզենբլատը իր հագուստները պատրաստել է տալիս Պարիզում։

—Այո, ճիշտ գուշակեցիք, պատասխանեց փոքրիկ բուրժուազը։ Նրբ մարդ այդքան խոշոր հարստութեան տէր է, յաճախ տէր է լինում և անհեթեթ քմահաճոյքների և քիչ հայրենասերութեան։

Ճաշի սկիզբը բաւական յուռ անցաւ։ Բայց հետզհետէ բարձրացաւ մասնաւոր խօսակցութիւնների աղմուկը։ Նոր էին սկսում խմել։ պ. Ռօզենբլատ իր գաւաթի մինչև բերանը լեցնել էր տալիս Հոենոսի գինիով։ Ակնոցաւոր երկու պրիվադոցները ներքին թողել էին Հոենոսի գինին և ընկել էին Վօլքսայմի

գինու վրայ, ինչպէս մի դժուար ընթեռնելի ձեռագրի վրայ և նոյնքան լրջութեամբ: Ձայները բարձրացան, հնչեցին ուժեղ: Ծառաների ոտնաձայնը չէր լսոււմ այլևս տախտակամածի վրայ: Ընդհանուր խնդիրների վերաբերեալ հարցերը սկսեցին երևան գալ, ինչպէս փրփուրը գաւաթի մէջ: Պրոֆեսոր Կնէպպէ, որ թաւ ձայն ունէր, բաց արտասանում էր շատ յստակ կերպով, իշխեց խօսակցութիւնների ժխորի վրայ պատասխանելու համար տիկին Բրաւսիգին, որ նստել էր իր կողքին.

—Ո՛չ, ես չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է ուժեղի կողմը բռնել, այն պարզ պատճառով որ ուժեղ է: Ես միշտ մի լիբերալ եմ եղել:

—Դուք ակնարկում էք դուցէ Տրանսվալը, ասաց, հնչուն ծիծաղով՝ խորհրդականը, որ նստել էր նրա դիմաց և շատ բաւական էր որ ուղիղ գուշակեց:

—Այո, հէնց Տրանսվալը, պարոն ներքին խորհրդական: Այնքան էլ լաւ քաղաքականութիւն չէ թողնել որ ջախջախուի տկարը:

—Այդ ձեզ զարմացնում է:

—Ո՛չ, չի զարմացնում: Բայց ես ասում եմ, որ չարժէ այդպիսի քաղաքականութեամբ պարծենալ:

—Միթէ միւս ազգերը այլ կերպ վարուեցին, հարցրեց բարօն ֆօն Ֆինկէն:

Վեր բարձրացեց իր լիրք քիթը: Ո՛չ ոք չչարունակեց վիճաբանութիւնը, որպէս թէ առաջ բերուած պատճառաւ նութիւնը անհերքելի լինէր: Եւ նորից սկսուեց թաւալուել ընդհանուր խօսակցութեան ալիքը, միախառնելով և ընկղմելով մասնաւոր խօսակցութիւնները:

Տիկին Ռոզէնբլադի երաժշտական ձայնը խրդեց այդ ժխորը: Նա ասում էր փոքրիկ տիկին Կնէպպէին որ նստել էր սեղանի միակողմը.

—Այո, տիկին, հաւատացնում եմ քեզ, որ մտածուած է այդ մասին:

—Ամեն ինչ կարելի է, տիկին. բայց, այնուամենայնիւ ես երբէք չէի ենթադրում, որ գերմանական մի քաղաքի խորհուրդը կարողանար նոյնիսկ վիճաբանութեան դնել մի այդպիսի գաղափար:

—Այնքան էլ անմիտ չէ: Այդպէս չէ, պարոն պրոֆեսոր, դուք որ ուսուցանում էք գեղեցկագիտութիւնը:

Պրոֆեսոր ֆօն Ֆինկէն, տիկին Ռոզէնբլադի աջ կողմը նստած՝ դարձաւ դէպի նա, նայեց նրա մինչև աչքերի խորքը, որոնք մի լճի նման անվրդով մնացին, և ասաց.

—Ինչի՞ մասին է, տիկին:

—Նա առում եմ տիկին Կնէպպլէի, որ քաղաքային խորհրդում հարց է յարուցուած Պարիզ ուղարկելու Գօրլէնի գորգերը, որ կաղմում են քաղաքի սեպհականութիւնը: Նրանք նորոգութեան կարիք ունին:

—Ուղիղ է, տիկին. բայց մերժուեց:

—Ինչո՞ւ չուղարկել Բերլին, հարցրեց տիկին Կնէպպլէի վարդագոյն, սիրուն բերանը: Միթէ՞ Բերլինում անճաշակ են աշխատում:

Բրաւսիգ խորհրդականը միջամտելու և հաշտեցնելու վայրկեանը եկած համարեց:

—Գօրլէնի գորգեր պատրաստելու համար, անկասկած եւ իրաւունք կը տայի տիկին Ռոզենըլատին, Պարիզն այս դէպքում անհրաժեշտ է: Բայց նորոգութիւններ կատարելու համար ինձ թուում է թէ կարելի է ուղարկել Բերլին:

—Մի Գօրլէնի գորգերը Պարիզ ուղարկել, բացականչեց տիկին Կնէպպլէ. վստահ էք որ նրանք յետ կը դառնային:

—Օհ, գոչեց լրջութեամբ, սեղանի ծայրից, երիտասարդ նկարիչներից մէկը... Օհ, տիկին:

—Ինչպէս թէ, ճի: Դուք ալգասցի էք, պարոն, ասաց փոքրիկ բուրժուազը, ասնտուած բացականչութիւնից, որպէս մի ասեղի ծայրից: Բայց մենք, գերմանացիներս, իրաւունք ունենք կասկածանքով վերաբերուելու...

Նա չափից անց էր կացել: Ո՛չ որ դիտողութիւն չարեց: Նոանդուն խօսակցութիւնը մարեց, և ամեն մարդ սկսեց փաղաքական գովեստներ ուղղել այն ձինգէնի հասցէին, որ հրաձցնում էին: Նոյն ինքն տիկին Կնէպպլէ վերադարձաւ այնպիսի թէմաների, որ իրան աւելի ընտանի էին, որովհետեւ նա շատ քիչ անգամ մասնակցում էր վիճաբանութիւնների, տղամարդկանց ներկայութեամբ: Նա դարձաւ դէպի հարևանը Ֆօն Ֆարնով, որպէսզի ոչ գեղանի տիկին Ռոզենըլատին և ոչ էլ նրա կօրսաժը տեսնէ...

Տիկին Բրաւսիգ հաղիւ մի քանի աննշան բառեր փոխանակել էր պ. Ռօզենըլատի հետ, որը նստել էր նրա աջ կողմում և անյազաբար ուտում էր, ինչպէս և պրոֆեսոր Կնէպպլէի հետ, որ նստել էր ձախ կողմում և շարունակ խօսում էր տիկին Ռօզենըլատի, բարօն Ֆօն Ֆինգէնի հետ և երբեմն էլ ժամ Օբերլէի հետ: Դարձեալ մի վիճաբանութիւն ծագեց, որի պատճառը այս անգամ տիկին Բրաւսիգը եղաւ և առանց ուղեւորւ Պօսակցութիւնը իսկոյն տաքացաւ և անօրինակ ոգևորութեան հասաւ: Սորհրդականի կիներ խօսում էր պ. Ռոզենըլատի հետ, հայեացքով

սպառնալով հանդերձ մի ծառայի, որ անզգուշութեամբ ընդհարուել էր իր գլխաւոր հիւրի՝ տիկին Ռոզնբլատի աթոռի յենարանին. նա խօսում էր մի ամուսնութեան մասին, որ տեղի էր ունեցել մի ալգասուհու և թնդանօթածիզ զօրքի հրամանատար հանօվըցի մի գերմանացու միջև։ Երկաթի վաճառականը՝ առանց կասկածելու որ իր կողքին նստել էր մարդը՝ մի այնպիսի երիտասարդ աղջկայ, որի հետ ցանկանում էր ամուսնանալ և մի այլ գերմանացի սպայ, տաքացած պատասխանեց.

— Երեխաները լաւ գերմանացիներ կը լինեն, այդ կարգի ամուսնութիւնները հազուադէպ են, կարելի է ասել նոյնիսկ չափազանց հազուադէպ, որովհետեւ հզօրապէս պիտի նպաստէին այդ յամառ երկրի գերմանացման։

Բարոն Ֆօն Ֆինկէն սեղանի վրայ դրեց շամպանի բաժակը, որը մի ուժգով դատարկել էր, և ասաց.

— Բոլոր միջոցները լաւ են, որովհետեւ նպատակը շատ ազնիւ է։

— Անկասկած, ասաց պ. Ռոզնբլատ։

Ժան Օբերլէ, ներկայ եղող երեք ալգասցիներէից ամենայայտնի, ամենայարմար անձն էր պատասխանելու համար, ինչպէս և, ըստ երևոյթին, ամենից աւելի արգելքներ ունեցող անձը իր կարծիքը յայտնելու, այն երկպառակութիւնների պատճառով որ այդ միւնիստ հարցը գցել էր իր շուրջը։ Նա նկատեց, որ, խօսելիս՝ բարօն դը Ֆինգէնը նայել էր նրան, որ պ. Ռօզնբլատը հայեացքը սեւեռել էր իր վրայ, որ պրոֆեսոր Կնապպէ, դադատադողի մի ակնարկ էր գցել իր ձախ հարեանի վրայ, որ պ. Ռոզնբլատը ժպտում էր մի այնպիսի կերպարանքով, որ կարծես ուզենար ասել. «Այս փոքրիկը կարող է արդեօք իր ազգը պաշտպանելու։ Զգում է խթանը։ Տեսնենք։

Երիտասարդը՝ ընտրելով իր հակառակորդին և դարձած դէպի պ. Ը. Ֆինգէնը, պատասխանեց.

Ես մտածում եմ, ընդհակառակը, որ Ալգասի գերմանացումը մի վատ և ձախորդ գործողութիւն է։

Նոյն բոլէին ժանի դէմքը արեացաւ՝ նրա աչքերի կանաչը թոթոաց, ինչպէս անտառների կանաչը, երբ քամին անտրակում է ծառերը։

Գեղեցկագիտութեան պրոֆեսորը ստացաւ մի զինուորականի կերպարանքը.

— Ինչո՞ւ վատ, խնդրեմ։ Արդեօք դուք նրա նուաճումը մի ցաւալի գործ էք համարում. նուաճման, որի հետեանքն է գերմանացումը։ Եթէ համարում էք, ինչո՞ւ էք թաքցնում, ասացէ՛ք։

Բոլոր հրաւիրեալներն խոր լռութեան մէջ, Ժան Օրերլէի պատասխանը թնդաց.

—Այո:

—Դուք համարձակուի՞մ էք, պարոն:

—Թոյլ տուէ՛ք, բացականչեց պ. Ներքին խոհրդական Բրաւարդ, ձեռքը երկարելով, որպէս օրհնելու համար: Մենք՝ բոլոր այստեղ հաւաքուածներս, պատուական գերմանացիներ ենք, իմ սիրելի բարօն. դուք իրաւունք չունիք կասկածի ենթարկելու, իմ երիտասարդ բարեկամի հայրենասիրութիւնը, որ խօսում է պատմական տեսակէտից...

Տիկին Օրերլէ և Լուսիէն նշանացի ասում էին Ժանին «լութր, լութր»:

Բայց բարօն դը Ֆինգէն ոչինչ չտեսաւ, ոչինչ չլսեց: Դաժան կիրքը, որ փայլում էր սրա դէմքի վրայ, պոռթկաց: Կիսով չափ բարձրացաւ տեղից, կռացաւ, գլուխը դէպի առաջ ձգած.

—Ի՞նչ ասել կուզէ, հիւանձիւ է, Ֆրանսիան: Նա մէկ սիրտ, մէկ հոգի է: Նա հզօր է: Նա բարոյական է:

Փոքրիկ տիկին Կնէպպլէ շարունակեց.

—Մանականդ բարոյական:

Բարձր, ցած, հեգնական, զայրացած ձայներ խառն ի խուռն բացականչեցին.

—Ջուրձասէրներ են Ֆրանսիացիները:

—Մէկ մտիկ տուէ՛ք նրանց գարշելի վէպերին և պիէսաներին:

—Այլասերուած, ընկած է Ֆրանսիան:

—Բանը պրծած անգգ է:

—Ի՞նչ կարող է անել յիսունևհինգ միլիօն գերմանացու դէմ:

Ժան թոյլ տուեց որ բղաւեն: Նա նայում էր մերթ ֆինգէնին, որ ձեռքով, գլխով կատաղի շարժումներ էր դործում, մերթ ֆարնովին, որ յօնքերը կիտած և գլուխը բարձր բռնած՝ լսում էր:

—Ինձ թւում է, որ դուք չափազանց նախատեցիք Ֆրանսիան, պատասխանեց Ժան վերջապէս: Կարող է պատահել, որ նրա կառավարիչները անքննադատելի չլինեն, կարող է պատահել որ նա տկարացած լինի Ներքին երկպառակութիւններով. Բայց քանի որ դուք յարձակում էք նրա վրայ, ես երջանիկ եմ զգում ինձ ասելու, որ ես նրան նկատում եմ դեռ ևս իբրև մի շատ մեծ ազգ: Դուք ինքներդ, այլ կարծիքի չէք:

Իսկական բղաւոցներ բարձրացան.

—Օհ, օհ, ասելիք չկայ:

—Ապացոյց՝ այն, դուք մոլեգնօրէն յարձակում էք նրա վրայ: Ուղիղ է դուք նրան յաղթեցիք, բայց չէք դադարում երբէք նրան նախանձելուց:

—Դուք վաճառականական ստատիստիկաները կարողւմ էք, երիտասարդ պարոն, հարցրեց պ. Ռոզէնբլատի անյողողող ձայնը:

—Իրանց վաճառականական նաւերով վեցերորդ տեղն են բռնում, ճշաց պրիվա-դօզէնտներին մէկը:

—Բաղդատեցէք մեր և նրանց բանականները, ասաց միւսը:

Պրոֆեսոր Կնէպպլէ՝ ակնոցները քթի վրայ լաւ հաստատելուց յետոյ, ճառեց,

—Ինչ որ դուք ասում էք, իմ սիրելի Օբերլէ, ճիշտ է միայն անցեալի համար: Ես կարող եմ աւելացնել, որ եթէ Ֆրանսիան սեփականացրած լինէինք, նոյնիսկ այսօր նա կարող էր շուտով մեծ երկիր դառնալ. մենք կը կարողանայինք երեւան հանել նրա յարժանիքները...

—Խնդրում եմ, յարեց լրբութեամբ Ֆինգէն, մի վիճէք մի կարծիքի մասին, որն անկարելի է պաշտպանել:

—Ես նոյնպէս խնդրում եմ ձեզ, ասաց Ժան. մի վիճէք յենտելով այնպիսի փաստերի վրայ, որոնք ոչինչ չեն ապացուցանում, և ոչինչ կապ չունեն իսկական խնդրի հետ: Մի դարձացած մարդու համար ներելի չէ բնաւ դատել մի երկիր, պարզապէս նրա առեւտրով, բանակով կամ նաւատորմով:

—Ինչով դատել ուրեմն, պարոն:

—Նրա հոգիով, պարոն: Ֆրանսիան ունի իր սեփական հոգին, որ ես ճանաչում եմ պատմութիւնից, և չեմ իմանում որդիական թիւնչ բնազդի շնորհիւ, որ ես զգում եմ իմ մէջ: Եւ ես հաստատապէս համոզուած եմ, որ կան շատ բարձրագոյն առաքինութիւններ կամ ազնիւ յատկութիւններ, վեհանձնութիւնը, անշահախնդրութիւնը, արդարասիրութիւնը, ճաշակը, փափկութիւնը, և հերոսութեան մի որոշ ձգտում, որ գտնում ենք, և ամենից աւելի առատօրէն, այդ ազգի անցեալի ինչպէս և ներկայի մէջ: Ես կարող էի բազմաթիւ ապացոյցներ առաջ բերել: Եթէ ձեր ասածի չափ տկար լինէր անգամ, նա իր մէջ թաքցնում է այնպիսի գանձեր, որ աշխարհի փառքն են կազմում, և որոնց պէտք էր տիրանալ նախ քան որ նա արժանի լինի մեռնելու, և որոնց հետ բաղդատմամբ, ոչինչ աշխարհում կարևորութիւն չունի: Ձեր գերմանացումը, պարոն, ջնջումը կամ պակասեցումն է ֆրանսիական այն առաքինութիւնների

կամ յատկութիւնների, որ գտնուում են աղաասական հոգու մէջ: Ահա ինչո՞ւ համար, ես պնդում եմ, որ նա վատ է...

—Է՛հ, դուք էլ, գոչեց Ֆինգէն: Ալգասը ընականօրէն պատկանում էր Գերմանիային, և նա վերադարձաւ նրան. մենք տիրանում ենք մեր նախկին ստացուածքին: Ո՞վ մեզանից տարբեր եղանակով պիտի վարուէր:

—Փրանսիան, պատասխանեց Օբերլէ. և դրա համար է ահա, որ սիրում ենք նրան: Նա կտրող էր գրաւել երկիրը, բայց չէր բռնաբարել նրա հոգին: Մենք նրան պատկանում էինք այն իրաւունքով՝ որ տալիս է մեզ սէրը:

Բարոնը ուսերը ցնցեց.

—Վերադարձէ՛ք ուրեմն Փրանսիա:

Ժան մաղ մնաց աղաղակէր: «Այո՛»: Ծառաները խօսակցութեան ունկնդրելու համար մոռանում էին կերակուրները հրամցնել: Ժան շարունակեց.

—Ուրեմն, ձեր գերմանացման փորձը՝ վերցրած ինքն իրա մէջ՝ ես գտնում եմ վատ, որովհետեւ նա մի պարզ բռնաբարում է խղճմտանքների. բայց ես գտնում եմ որ նա մի ձախորդ գործ է նաև գերմանական հայեցակէտից:

—Հիանալի, սուր ձգած տիկին Կնէպպլէ:

—Ձեր շահերը պահանջում էին նոյնիսկ, որ դուք պահպանէիք մեր մտքի ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը: Դա կը լինէր մի օգտակար օրինակ Գերմանիայում:

—Շնորհակալ ենք, ասաց մի ձայն:

—Հետզհետէ աւելի օգտակար օրինակ, պնդեց երիտասարդը: Ես իմ դաստիարակութիւնը ստացայ Գերմանիայում և վստահ եմ իմ առածի մասին: Ինչ որ ամենից աւելի ինձ դարմացրել, վիրաւորել է—գերմանացիները անկախ, ուրոյն, անձնական կարծիք չունին, որ նրանք հետզհետէ աւելի մոռացութեան են տալիս աղատութեան գաղափարը, որ նրանք հետզհետէ տեղի են տալիս կայ...

—Զգուշացէ՛ք, երիտասարդ պարոն, ընդհատեց ուժգնօրէն խորհրդական Բրաւսիգ:

Կ'ասեմ Պրուսիայի իշխանութեան առաջ, պարոն խորհրդական, որ լափում է խղճմտանքները և որը միայն երեք տիպի մարդկանց թոյլ է տալիս, որ ապրեն, մարդկանց՝ որոնց կաղապարել է ինքը մանկութիւնից սկսած—հարկատուներ, պաշտօնեաներ և զինուորներ:

Սեղանի ծայրը նստած պրիվա-դոցենտներից մէկը բարձրացաւ իր աթոռի վրայ.

—Հոռմէական կայսրութիւնը նոյնն էր անուամբ, բայց այդ չէր արգելում որ լինի հոռմէական կայսրութիւն:

Նրա կողքից մի յուզուած ձայն գոչեց.

—Բրաւօ:

Բոլոր հիւրերը նայեցին: Դա Վիլհէլմ ֆոն Յառնոյն էր, որ արտասանել էր միայն այդ բառը ամբողջ վիճաբանութեան ընթացքում: Բանակաւոր ուժգնութիւնը զայրացրել էր նրան ինչպէս մի անձնական գրգռում: Նա գրգռուած էր ուրիշներին: Պ. Ռոզենբլատ սեղմուած էր իր բռունցքները: Պրոֆեսոր Կնեպպլէ կատաղի խօսքեր էր մրմուռւած, մաքրելով իր ակնոցի ապակիները: Նրա կիները ներվային փոքրիկ ծիծաղներ էր արձակում:

Այդ բոլորին, գեղանի տիկին Ռոզենբլատ, վերից վար, մատներով շօշափելով նուրբ մարգարտեայ մանեակը, ժպտաց, և սիրալիւր նայելով ալլասեցուն.

—Պ. Օբերլէն գոնէ իր կարծիքները յայտնելու քաջութիւնն ունի, ասաց: Սրանից աւելի անկեղծօրէն, համարձակօրէն, չի կարելի խօսել ձեզ դէմ:

Ժանի հոգին շատ էր վառուած հաճոյակատարութեամբ պատասխանելու համար: Նա յաջորդաբար նայեց շեշտակի Ֆինգէնի, Ռոզենբլատի, Կնեպպլէի, Լիւսիէնի կողքին վրդովմունքից տանջուող պրիւլա-դոցենտի երեսին, յետոյ թեթեւօրէն խոնարհութիւն արեց տիկին Ռոզենբլատին:

—Կանանց շնորհիւ միայն գերմանական ազգը պիտի կարողանայ տիրանալ նրբութեան, նրբամտութեան այն աստիճանին, որ պակասում է նրան, տիկին: Նա ունի կատարեալ կանայք...

Շնորհակալ ենք ձեր սրտացաւութեան համար, պատասխանեցին տղամարդու երեք ձայներ:

Տիկին Կնեպպլէ տիկին Ռոզենբլատին ուղղուած կոմպլիմենտից կատաղած՝ աղաղակեց.

—Ի՞նչ սխտեմ ունիք, ուրեմն, պարոն, թօթափելու համար Գերմանիայի լուծը:

—Ո՛չ մի սխտեմ:

—Ուրեմն ի՞նչ էք ուզում:

—Ո՛չինչ, տիկին: Ես տանջուած եմ:

Ալլասեցի արուեստագէտներից մէկը՝ դեղին, սրածայր, փոքր մօրուքով այն նկարիչը, որ նմանուած էր Զիօտտօյի մի աշակերտի, խօսակցութեան մէջ մտաւ, և սեղանի բոլոր հիւրերը կռացան դէպի նրա կողմը:

—Ես պ. Օբերլէի նման չեմ, որը ոչինչ չէ ուզում: Նա երկար բացակայութիւնից յետոյ, նոր է վերադարձել Ալլասե:

Եթէ մի քիչ ապրած լինէր նրանց մէջ, այլ ձևով պիտի եզրակացնէր: Մենք՝ նոր սերունդի ալգասցիներս, երեք հարիւր հազար գերմանացիների հետ շփման մէջ ապրելով նկատեցինք որ ֆրանսիական կուլտուրան բոլորովին զանազանում է միւսից: Մենք նախամեծար ենք համարում մերը, և այդ ներելի է, չէ: Փոխարէն այն լոյալ վերաբերմունքի, որ ցոյց տուինք դէպի Գերմանիան, այն տուրքի, որ վճարում ենք, դիւտուրական այն ծառայութեան, որ կատարում ենք, կարծում ենք որ իրաւունք ունենք ալգասցի մնալու: Ահա ինչ որ դուք չէք ուզում ընաւ հասկանալ: Մենք պահանջում ենք, որ մեզ համար բացառիկ օրէնքներ չլինեն, որ մեզ չենթարկեն այն համարեա վիտուրական դրութեան, որի մէջ ապրում ենք, երեսուն տարուց ի վեր. մենք պահանջում ենք, որ մեզ հետ չըվարուեն, մեզ չկառավարեն, այնպէս՝ ինչպէս վարում և կառավարում են «կայսրութեան որևէ գաղթականութիւնը», օրինակ, Կամրունը, Տոգուանդը, Նոր-Կուինէան, Բիզմարկեան արշիպելագոսը կամ Պրովեդանսի կղզիները, այլ կառավարեն և վարուեն, ինչպէս գերմանական կայսրութեան եւրոպական մի գաւառի հետ: Մենք գոհ կարող ենք լինել միայն այն օրը, երբ կը լինենք այստեղ մեր սեփական երկրում, ալգասցիներ՝ Ալգասում, ինչպէս բաւարացիները բաւարացիներ են Բաւարիայում, մինչդեռ մենք դեռ ևս պարտուածներ ենք համարւում, խաղալիք՝ մի տիրոջ քմահաճոյքին: Ահա իմ խնդիրքը:

Նա խօսում էր պարզ ու յստակ կերպով, բացայայտ անդորրութեամբ և նրա ոսկեգոյն սուր ձորուքը ցցւում էր դէպի առաջ, ինչպէս մի նետի սուր ծայրը: Նրա հաշուած, ձևուած բառերը՝ դրզւած վերջին աստիճանին հասցրին մտքերը, և կարելի էր սպասել որ կրքոտ պատասխաններ տրուէին միմիանց, երբ տիկին Բրաւսիդ վերկացաւ:

Նրա հիւրերը հետեցին նրա օրինակին, և վերադարձան կապոյտ դահլիճը:

—Քո վարձունքը անմիտ է: Ի՞նչ էիր մտածում ասաց իրաւիէն կիսաձայն, ժանի մօտով անցնելիս:

—Գուցէ անխոհեմութիւն էր ինչ որ քիչ առաջ ասացիր, աւելացրեց մի ըոպէ յետոյ, տիկին՝ Օբերլէ, բայց դու լաւ պաշտպանեցիր Ալգասը, և ես հաւանում եմ ըո վարձունքը:

Պ. Ներքին խորհրդականը արդէն գլուխ էր տալիս ամեն կողմ և մրմնջում էր Ֆինգէնի, դը-Պարնովի, պ. Ռոզենբլատի, պրոֆեսոր Կնէպպլէի, երկու պրիվա-դոցենտների, ժանի և ալգասցի երկու արուեստագէտների ականջին միևնոյն ուղորա-

կան բանաձևեր. «Մեծ հաճոյք պիտի պատճառէիք հետեւելով ինձ ծխարան»:

Ծխելու յատկացուած էր երկրորդ սրահը, որ բաժանուած էր առաջինից անագ չուսեցող մի մի հայելիով:

Պ. Բրաւսիգի հրաւիրեալները խնդրեցին բոլորն էլ նոյն սրահում հաւաքուեցին: Սիգար և գարեջուր բերին: Ծխի քուլաներ բարձրացան և խառնուեցին առաստաղում: Պ. Ռոզենբլատ խօսակցութեան մի կենտրոն կազմեց: Պ. պրոֆեսոր Փոն Ֆինգէն մի այլ կենտրոն: Բարձր ձայնով պայքարում էին և դժուարութեամբ բացատրում պարզ գաղափարներ:

Միայն երկու հոգի խօսակցում էին առանց աղմուկի և մի շատ լուրջ հարցի մասին: Դրանք ժամ Օքերլէյն և Ֆարնոֆիէն: Հազիւ վառուել էր իմ սիգարը, երբ վերջինը դիպաւ ժամի թեկին և ասաց.

— Ես կը ցանկանայի քեզ հետ մի տեսակցութիւն ունենալ և առանձին:

Եւ աւելի ազատ լինելու հասար, երկու երիտասարդները նստել էին վիթխարի վառարանի մօտ, այն դառն հանդէպ, որ տանում էր դէպի միւս սրահը, մինչդեռ միւս ծխողները, խըմբուած պ. Ռօզենբլատի և պ. դը Ֆինգէնի շուրջը, կանգնել էին պատուհանների առաջ:

— Այս երեկոյ դուք խիստ խօսեցիք, սիրելիս, ասաց Ֆարնօլ, այն գոռոզ քաղաքավարութեամբ, որին վարժ էր. քանի՞ քանի՞ անգամ ես փորձեցի ձեզ պատասխանել, բայց նախամեծար համարեցի սպասել: Պէտք է ասել, որ ձեր խօսքերը ուղղուած էին մասամբ էլ ինձ:

— Մեծ մասամբ ձեզ: Ես կամեցայ ձեզ ասել շատ պարզ կերպով թէ ի՞նչ էի ես, ինչ՞ էի մտածում և ձեզ ցոյց տալ վկայների առաջ, որպէսզի հաստատուի, որ եթէ դուք յամառում էք ձեր մտադրութիւնների մէջ, ես գոնէ չեմ արել ձեզ ոչ մի զիջում, ոչ մի աւանս, որ ես ոչնչով խառն չեմ այն ամուսնութեան մէջ, որ մտածում էք իրազեղածի: Ես կարիք չեմ զգում հակառակուելու իմ հօր կամքին, բայց ես չեմ ուզում որ շփոթեն իմ գաղափարները, նրա գաղափարները հետ:

— Ես այնպէս էլ հասկացայ... Դուք, իհարկէ իմացաք, որ ես ձեր քրոջ տեսել եմ բարձր շրջաններում և սիրում եմ նրան:

— Այո:

— Միայն միդ է ձեր ամբողջ պատասխանը:

Արեան մի ալիք բարձրացաւ դէպի գերմանացու այտերը:

—Պօսեցէք, շնորհ, շարունակեց նա: Իմ ընտանիքը իսկա-
կան ազնուական ցեղից է, ընդունում էք:

—Այո:

—Ընդունում էք որ մի կնոջ համար պատիւ է գնահա-
տուել, փնտրուել մի գերմանացի սպայի կողմից:

—Դուք է, բայց—յամենայն դէպս ոչ մի ալկասուհու հա-
մար: Որքան որ էլ դուք անկարող լինէիք հասկանալու այդ
զգացումը, մենք բոլորովին տարբեր ենք ուրիշներից, մենք
Ալվասի ընտանիքներս: Ես ձեզ շատ եմ յարգում, Ֆարնով:
Բայց ձեր ամուսնութիւնը իմ քրոջ հետ, անգթօրէն պիտի
հարուածէ երեք հոգու մեր տան մէջ: Նախ ինձ:

—Ինչո՞ւ, խնդրեմ:

Նրանք ստիպուած էին խօսել ցածր ձայնով, և խոյս
տալ շարժումներից. նրա համար, որ սրահի միւս ծայրում պ.
Բրաւսիգի հիւրերը դիտում էին երկու իրիտասարդներին և աշ-
խատում էին մեկնել նրանց երկուսի դէպի միմիանց ունեցած
վերաբերմունքը: Նրանց ամբողջ յուզումը, ամբողջ դայրոյթը
ցոլանում էր նրանց աչքերի մէջ և խուլ, զսպուած շշուշի մէջ
այն բռնակի, որոնք պէտք է լսուէին միայն մի հոգուց:

—Առանց անապի հայելու միջից Լիւսիէն կարողանում
էր տեսնել Ֆարնովին, և, վերկենալով և անցնելով սրա-
նից, կամ իբր թէ հիացմունքով դիտելով ծաղիկեկողովը,
որ արուած էր հայելու շրջանակի առաջ, նա զննում էր
սպայի և իր եղբոր դէմքերը:

—Դուք սրտի տէր մարդ էք, Ֆարնով: Մտածեցէք մեր
ընտանիքի դրութեան մասին Ալքէյմում, երբ գծաւթեան այս
պատճառն էլ աւելանայ միւսների վրայ:

—Ես կը հեռանամ, ասաց սպան, ես կարող եմ թոյլտու-
թիւն ստանալ որ ինձ տեղափոխեն այլ տեղ, Ստրազբուրգից
հեռու:

—Յիշատակները, այնուամենայնիւ, կը մնան մեր տան
մէջ: Բայց այդ չէ գեւ բոլորը: Եւ, այժմեանից ևեթ, կայ մայրս,
որ չպիտի ընդունէ...

Ձեռքի մի շարժումով Ֆարնով ցոյց տուեց որ չէր կարող
ընդունել այդ առարկութիւնը:

—Կայ և իմ պապը, այն անձը, որ Ալվասը ընտրել էր
իբրև պատգամաւոր բողոքելու համար, և որը չի կարող այսօր
ուրանալ իր ամբողջ անցեալը:

—Ես ոչինչ պարտ չեմ պ. Ֆելիպ Օքերլէի, ընդհատեց
Ֆարնով:

Ձայնը դարձաւ աւելի հրամայողական.

— Եւ ձեզ նախապէս ասում եմ, որ ես երբէք յետ չեմ կանգնի իմ կայացրած որեւէ որոշումից: Երբ պ. դը Կասըվից, Ստրազբուրգի նահանգապետը և այն միակ մօտիկ ազգակա- նը որ ես ունեմ այժմ, երբ պ. դը Կասըվիցը վերադառնայ իր արձակուրդից, որ պէտք է ստանայ մի քանի օրից, պիտի գնայ Ալշէյմ, ձեզ մօտ. օրիորդ Լիւսիէն Օբերլէյն պիտի խնդրէ անուամբեան իր եղբորորդու համար, և նրա դի- մուռը յաջողութեամբ պիտի պսակուի, որովհետեւ օրիորդ Լիւ- սիէն Օբերլէյն ուրախութեամբ ընդունում է իմ առաջարկը, որովհետեւ նրա հայրը արդէն տուել է իր համաձայնութիւնը, և որովհետեւ ես կամենում եմ որ այդպէս լինի, ես, Վիլհէլմ Ֆոն Ֆարնով:

— Մնում է որոշել այն՝ թէ որ աստիճան լաւ բան էք անում...

— Ինչ որ անում եմ, անում եմ իմ սեփական կամքով. այդ արդէն ինձ բաւական է:

— Ո՞րքան հպարտութիւն կայ ձեր սիրոյ մէջ, Ֆարնով:

— Իմ ամեն գործերում էլ կայ, Օբերլէյ:

— Կարծում էք որ ես չեմ իմանում: Իմ քրոջ հաւանե- ցիք, որովհետեւ սիրուն է:

— Այո:

— Խեղցի:

— Այո:

— Որովհետեւ, մանաւանդ, ալլառուհի է: Ձեր հպարտու- թիւնը նրա մէջ տեսաւ մի յաղթանակ, որը պէտք էր տանել անպատճառ: Դուք շատ լաւ գիտէք որ Ալլառի կանայք սովորու- թիւն ունեն մերժելու գերմանացիների ձեռքը: Դրանք ձեր սիրային փոռամարտութիւններին դժուարամատչելի թաղու- ճիւններ են, և կսած գիւղացի աղջիկներից, որ, հաւակոյթների ժամանակ մերժում են պարել գերմանացիների հետ, մինչդեռ մեր քոյրերը, որոնց չի կարելի յաճախ հանդիպել ձեր սրահ- ներում կամ ձեր թիւր մտած: Դուք Լիւսիէն Օբերլէյն կնու- թեան ստանալով պիտի պարծենաք այն բոլոր զօրագնդերում, ուր պիտի ձառայէք: Դուք և այդ անուամբեան շնորհիւ բարենիշ ստանաք ձեր պետերի կողմից:

— Դժբէ, ասաց Ֆարնով հեգնութեամբ:

— Արէք ուրեմն ինչպէս կամենում էք: Ոտրտակեցէք մե- զանից երեքին:

— Ձայրանում էին. իւրաքանչիւրը աշխատում էր սակայն իրեն զսպել

Սպան վեր կացաւ, գցեց իր սիգարը, և ասաց գոռոզու-
թեամբ.

—Մենք քաղաքակիրթ բարբարոսներ ենք, այնպէս չէ՛.
լու, ընդունում եմ. բայց գոնէ մենք ձեզ չափ յաւակնու-
թիւններ չունենք արդար լինելու, ձեզ չափ նախապաշարուած
չենք արդարութեան մտքով: Եւ անհա զբա համար էլ մենք
պիտի նուաճենք աշխարհը, սիրելիս: Առ այժմ, Օրերլէ, ես
պիտի երթամ նստեմ ձեր մօտ, տիկին Օրերլէի մօտ և խօ-
սեմ նրա հետ իբրև թշնամի, որքան կարելի է սիրալիւ կեր-
պով: Ինձ կընկերանա՞ք:

Ժան նշանացի՝ բացասական պատասխան տուաւ:

Օրերլէին թողնելով՝ Ֆարնով հեռացաւ ծխարանից: Լիւ-
սիէն, անհանգստութեամբ սպասում էր նրան սրահում: Նա
տեսաւ, որ Ֆարնով գնաց դէպի տիկին Օրերլէ, բռնի ծիծա-
ղով՝ վիզըրեց մի աթոռ և մօտեցրեց այն թիկնաթոռին, ուր
նստել էր նրբահասակ ալգասուհին, սուգի զգեստներով:

Միևնոյն ժամանակ պ. խորհրդական Բրաւաիզ կանչեց.

—Օրերլէ: Դուք ծխեցիք ձեր սիգարը առանց նոյնիսկ
մի բաժակ գարեջուր խմելու: Բայց դա մի ոճիւր է: Շնորհ,
եկէ՛ք: Պ. պրոֆեսոր Կնէպպլէ մեզ բացատրում է հէնց այս
րոպէիս այն միջոցները որ ձեռք է առնում կառավարութիւնը
կռուելու համար Գերմանիայի արեւելեան գաւառների ուսու-
ցման դէմ

Գիշերը շատ ուշ, մի կառք՝ տանում էր դէպի Ալշէյմ ե-
րեք ուղևորների, որ վերցրել էր Մօլշէյմի կայարանից: Ճանա-
պարհը դեռ ևս երկար էր: Լիւսիէն շուտով ընեց կառքի խոր-
քում: Նրա մայրը, որ մինչև այդ՝ լուսթիւն էր պահպանել,
կռնալով դէպի որդին, նրան հարցրեց, մատնացոյց անելով
գեղանի արարածին՝ որ ընկղմուել էր քնի և խաղաղութեան
մէջ:

—Դու գիտէ՞իր:

—Այո:

—Ես գուշակեցի... Այո իսկոյն գուշակեցի: Տեսայ որ սա
նրան դիտում էր... Օհ, իմ Ժան, ես որ յոյս ունէի թէ կարող
կը լինենք խոյս տալ այդ վարչութիւնից... Նա, որի երկիւղից
յանձնառու եղայ այնքան, այնքան բաների... Միայն դու, դու
ևս մնում ինձ, Ժան... Բայց վստահ եմ որ քեզանից յուսախաբ
չեմ լինի:

Եւ նրան համբուրեց շատ պինդ կերպով:

XI

Յ Ե Մ Ա Ճ Գ Ո Ա Ճ

Որովհետև իրողութիւնները չեն կատարուում կէտառկէտ մեր կանխագուշակութիւնների համաձայն, պ. դը Կառլօնիցի այցելութիւնը տեղի չունեցաւ Ալլէյմ Ֆարնովի յայտնած ժամանակին: Յունիսի վերջին, բարձր պաշտոնեան, երբ հանքային ջրերու կատարած այցելութիւնից վերադառնալով՝ պատրաստուում էր գնալ Ալլէյմ և Լիւսիէնի ձեռքը խնդրել Ֆարնովի համար, մի հեռագիր ստացաւ որպէսզի յետաձգէ դիմումը: Պ. Ֆիլիպ Օրերլէի դրութիւնը յանկարծ ծանրացել էր:

Ծերունին, որին ստիպել էին յայտնել վերջապէս տան մէջ անցկացող դէպքերի մասին, իմացել էր ճշմարտութիւնը: Մի առաւօտ որդին բարձրացել էր անկարի սենեակը: Կողմնակի խօսքերով և շատ զգուշաւոր, յարգալից բացատրութիւններով հասկացրել էր, որ Լուսիէնը անտարբեր չէր գերմանացի մեծ ընտանիքներից մէկին՝ պատկանող հեծելազօրքի մի սպայի աւանտներին: Ասել էր, որ փոխադարձ համակրութիւնը ծնունդ էր առել ինքնաբերաբար, որ ինքը՝ Փողէփ Օրերլէ հակառակ իր ցանկութեան, ցաւելով հանդերձ տեղի ունեցող անախորժ եղելութեան մասին, իրան համար իրաւունք չէր համարում բռնադատել իր զաւակների ազատութիւնը, և յոյս ունէր, որ իր հայրը, յանուն ընտանեկան խաղաղութեան, կը համակերպուէր իրողութեան առաջ: «Հայր, ասել էր խօսքը վերջացնելով՝ գիտէք որ ձեր ընդդիմութիւնը բացի այն որ ոչ մի օգուտ չպիտի տար, կարող էր և խոշոր թիւրիմացութիւններ ստեղծել: Ահա յարմար առիթը, ցոյց տալու Լիւսիէնին ձեր հայրական սիրոյ մեծ ապացոյցը. արէք ինչպէս մենք են արել. մի արհամարհէք այդ առիթը:» Ծերունին նշանացի հարցրել էր. «Իսկ Մօնթկը: Արդեօք նա էլ տուէց իր համաձայնութիւնը:» պ. Փօզէֆ Օրերլէ առանց ստելու կարողացել էր հասարակական պատասխան տալ, որովհետև խեղճ կինը՝ բաժանման սպառնալիքի տակ, մի անգամ էլ տեղի էր տուել: Այն ժամանակ, անկարը՝ վերջ էր դրել իր որդու այդ երկար մենախօսութեան, գրելով երկու բառ, որոնք կազմում էին իր ամբողջ պատասխանը. «Ես ոչ»:

Նոյն գիշերն իսկ տենդը բռնել էր ծերունուն, շարունակուել էր յաջորդ օրը, և շուտով, իր յարատեւութեամբ և

հիւանդին պատճառած տկարացումով՝ անհանգստացնում էր Օրերլէներին:

Այդ օրուանից սկսած, գիշեր ցերեկ, պ. Ֆիլիպ Օրերլէի առողջութեան հարցն էր զբաղեցնում ամբողջ տունը: Հարցնում էին տիկին Մօնեկին, կամ Ժանին, որոնցից բացի ոչ ոքին չէր ընդունում. «ինչպէս է առողջութիւնը: Ուժեղը չե՞ն կազդուրւում: Արդեօք իր մտքի ամբողջ պայծառութիւնը պահել է?» Ամեն մարդ հետաքրքրւում էր այն բոլորով, ինչ դեղեր էր ունենում «վերևում», այն սենեակում, որտեղից ծերունի մարտնչողը կիսով չափ անհետացած ողջերի աշխարհից, կառավարում էր դեռևս իր երկպառակուած ընտանիքը և պահում էր նրան իր իշխանութեան տակ:

Ժան անհամբեր սպասում էր տագնապի վախճանին: Նրան անհանգստացնում էր ոչ միայն իր պապի հիւանդութիւնը, այլ և իր սեփական բախտը:

Լիւսիէնի հետ ունեցած բացատրութիւնից, մանաւանդ խորհրդական Բրաւսիգի տնում տեղի ունեցած երեկոյթից յետոյ, եղբօր և քրոջ միջև մտերմական ամեն յարաբերութիւն դադարել էր: Լիւսիէն որքան կարող էր իրան ցոյց էր տալիս սիրալիր և հաճոյակատար, բայց Ժան նրա ավանսներին չէր պատասխանում այլևս: Հէնց որ գործարանում աշխատանքը թոյլ էր տալիս, փախչում էր տանից: Գնում էր դաշտ դիտելու հնձորներին, կամ խօսելու իրանց հարեան՝ այժմ բարեկամ դարձած՝ Ռամզալսէրներին հետ, երբ մութն ընկնելուն վերադառնում էին դաշտից. շատ անգամ նա յոյս էր ունենում, որ կարող է գուցէ նշմարել պ. Քսաւիէ Բաստեանի աղջկան, ճանապարհով անցնելիս: Բայց շատ յաճախ բարձրանում էր Հէյտէնբրուի: Ժան՝ իր մօրեղբօր, Ուլրիխի առջ Բացել էր իր սիրտը և մինչև անգամ նրան յանձնել մի միսսիա: Ժան ասել էր նրան. «Այլևս յոյս չունեմ որ Օդիլը տան ինձ: Քրոջս ամուսնութիւնը պիտի խանգարէ իմը: Բայց, յաճնայն դէպս, ես պարտաւոր եմ ձեռքը խնդրել նրան՝ որին ասել եմ թէ սիրում եմ: Գիտեմ պիտի մերժեն, պիտի ջախջախեն սիրտս, բայց գոնէ թող պատասխանեն, որպէսզի հաստատ իմանամ այն, որի մասին երկիւղ եմ կրում: Երբ պ. Բաստեանը իմանայ, որ Լուսիէնը նշանուել է պ. դը Ֆարնուլի հետ կամ պիտի նշանուի—և այդ անպատճառ տեղի պիտի ունենայ, երբ պապը առողջանայ—դուք կերթաք պ. Բաստեանի մօտ, կը խօսէք նրա հետ իմ կողմից. նա ձեզ կը պատասխանէ գիտակցաբար: Դուք ինձ կ'ասէք թէ առյաւէտ նա մերժում է իր աղջկան ամուսնացնել դը Ֆարնուլի աներձագի հետ, թէ պահան-

շուռ է սպասել որոշ ժամանակ, փորձելու համար ինձ. ես, ոչինչ, կըսպասեմ որքան որ էլ երկար լինի նշանակած ժամանակամիջոցը, կամ թէ ոչ նա արիութիւնն ունի—թէպէտեւ ես չեմ հաւատում—արհամարհելու քրոջս ամուսնութեան պատճառած դայթակղութիւնը։»

Պ. Ուլլիխ խօսք էր տուել։

Օգոստոսի կէսին, տենդը՝ որ սպասում էր պ. Ֆիլիպ Օրերլէին, անհետացաւ։ Հակառակ բժշկի գուշակութեան, նա շուտով կազդուրուեց։ Հիւանդի զօրեղ կազմուածքը յաղթել էր տալնապը։ Եւ պ. Ժողէֆ Օրերլէ վերջ դրեց իր հօր շնորհած զինադուլին։ Եւ Պ. Ֆիլիպ Օրերլէ, որին մահը չէր ուզեցել տանել, նորից պիտի ընկնէր անդամալուծի իր տխուր կացութեան մէջ և ինչպէս ուրիշների, նոյնպէս նրա հետ պիտի վարուէին անխնայ կերպով։

Մերոնու և իր որդու մէջ ոչ մի նոր տեսարան տեղի չունեցաւ։ Ամեն ինչ անցաւ առանց աղմուկի։ Օգոստոսի 22-ին, ընթրիքից յետոյ սրահում, երբ Վիկտոր սուրճ նոր էր հրամցրել, պ. Ժողէֆ Օրերլէ ասաց տիկին Օրերլէին.

—Հայրս այժմ առողջացել է։ Այլևս ոչ մի պատճառ չկայ պ. դը Կասըվիցի այցելութիւնը յետաձգելու։ Ուրեմն իմացած եղէք, Մօնիկ, որ նա տեղի կունենայ այս մի քանի օրերում։ Քանի որ մենակ դուք էք գնում հօրս մօտ, բարեհաճեցէք յայտնել նրան։ Անհրաժեշտ է, որ ամեն ինչ անցնի այստեղ կանոնաւորապէս։ Այսպէս չէ։ Համաձայն չէք ինձ հետ։

—Չէ՞ք ուղում մի քիչ էլ յետաձգել այդ այցելութիւնը։

—Ո՛չ։

—Այդ դէպքում կը յայտնեմ։

Ժան նոյն երեկոյեան ևեթ գրեց պ. Ուլլիխին, որովհետեւ չէր կարող նրա մօտ գնալ.

«Մօրեղբայր, այցելութեան հարցը վճռուած է։ Հայրս ոչ ոքից չի թաքցնում այդ, ոչ իսկ ծառաներից։ Նա ուզում է, բացայայտ կերպով, որ քրոջս ամուսնութեան լուրը տարածուի։ Ուրեմն, երբ, այս օրերումս, հանդիպէք մի որեւէ արզասեցու, որը մեր դէմ վշտացած կամ զայրացած լինի, խնդրում եմ, գնացէք տեսէք արդեօք իմ փայփայած երազը կարող է ապրել դեռեւ։ Ասացէք պ. Բաստեանին, որ պ. Ֆիլիպ Օրերլէի թուն է որ ոչրում է Օդիլին։»

XII

ՀՄՈՒԼԻ ՅՈՒՆՃԵՐԸ

Սէնտ-Օդիլի ստորոտում, այգիներից մի քիչ ներքև, պ. Բաստեան և ուրիշ կալուածատէրներ կամ ագարակապաններ հաստատել էին հմուլի ¹⁾ դաշտեր: Արդ, եկել էր ժամանակը, երբ հմուլի ծաղիկը արտադրում է հոտաւէտ փոշու ամենա-բարձր քանակը:

Հմուլարոյծները, հետևաբար, այդ եղանակում թափւում էին հմուլի դաշտերը: Միջնորդները անց էին կենում գիւղերով: Լսւում էին գնողների և վաճառողների վիճաբանութիւնները, որ պատուում էին Վիտտէնբերգի, Բադէնի դքսութեան, Բոհէմիայի և Ալզասի հմուլների բաղդատական արժանի մասին:

Միւնիխից մի հրէայ, օգոստոսի 24-ի կիրակի օրը եկել էր պ. Բաստեանի մօտ և ասել էր.

—Վիւրտէմբերգը առատ հունձք է խոստանում. Բադէնը նոյնպէս. Բաւարիայում, հմուլի հարիւր կիլօն տալիս են հարիւր վաթսուն Ֆրանկով: Բայց դրանք առաջին կարգի ապրանք են: Այստեղ, երաշտը շատ է վնասել ձեր հունձքին: Բայց, այնուամենայնիւ, ձեզ կարող եմ տալ հարիւր քսան Ֆրանկ, պայմանով որ անմիջապէս հնձէք: Հունձքը հասել է:

Պ. Բաստեան ընդունել էր, և հրաւիրել էր հնձուոր մշակներին: օգոստոսի 28-ի համար: Այդ օրն է, որ կոմս Փօն Կասըվիցը պէտք այցելէր Պ. Ժօզէֆ Օրբերէին:

Առաւօտեանից արդէն տաքացած օդի միջով՝ հնձուոր կանայք գնում էին դէպի հմուլի դաշտերը: Ալշէյմի բոլոր բնակիչները գիտէին արդէն օրուայ դէպքը. պ. Բաստեանի դաշտերը հնձում են: Պ. Բաստեան ինքը՝ արշալոյսից առաջ վեր էր կացել, գնացել էր դաշտ, և քննում էր իւրաքանչիւր տունկը, հաշւում իր ապրանքը: Հեռւում կանգնել էր մի ձի, որ լծուած էր երկու նեղ սայլակների, որոնք պիտի փոխադրէին հունձքը: Սայլակների մօտ կանգնել էին ագարակապան Ռամշպխէրը, նրա երկու որդիները՝ Օդիւստէն և Ֆրանսուա և ագարակի ծառաներից մէկը: Կանայք, ուղղաձիգ ճանապարհից, որ յանգում էր նրանց մօտ, անկանոն խմբակներով բարձրանում էին: Իւրաքանչիւրը հագել էր

¹⁾ Մի տեսակ տունկ որ գործ է ածւում դարեջրի պատրաստութեան մէջ:

աշխատանքի շրջագրեստ և կօրսած, թեթև կերպասից, գունաթափ և հնամաշ, բացի Իտալից՝ նպարավաճառի աղջկանից, որ կրում էր մի համարեա բոլորովին նոր շրջագրեստ, կապոյտ, սպիտակ պուտերով, ինչպէս և Ժիւլիէտտից, լուսարարի թուխ աղջկանից, որը աչքի էր ընկնում Ալշէյմում իր վայելուչ արդուզարդով և որը այժմ հագել էր մի գոգնոց՝ սպիտակ և վարդագոյն քառակուսիներով: Մեծ մասը առանց գլխարկի էին, և իբրև հովանի իրանց դէմքին՝ կար միայն իրանց խարտեաշ մազերի փունջը: Գնում էին հանդարտ ու դանդաղ քայլերով: Մանկահասակ էին ու թարմ: Ծիծաղում էին: Ազարակի երիտասարդները՝ դաշտ դալիս, հնձուորները մանգաղով այս ու այն կողմ կանգնած՝ դարձնում էին իրանց գլուխը դէպի հնձուորունիները, հայեացքով հետևում էին նրանց, լուացարարունիներ, կար անողներ, աշակերտներ, որոնք առ հասարակ չէին երևում դաշտերում և որ գնում էին այժմ դէպի պ. Բաստեանի հմուլաստանը, որպէս մի խնջոյքի: Օդը պարզ էր: Մի քանի ծերուկներ, պողահաւաքներ՝ տեսնելով երիտասարդ այդ զուարթ խումբը ուղղում էին և դիտում:

Հնձուորունիները մտան պ. Բաստեանի հմուլաստանը: Պ. Բաստեան նրանց իւրաքանչիւրին բաժանեց աշխատանքը և ասաց որ պէտք էր սկսել այն մասից որ կից է ճանապարհին: Նրանք աշխատում էին քրքշալով: Ազարակի ծառաներից մէկը բարձրաձայն ասաց:

—Ի՞նչ, ոչ ոք չի՞ ուզում երգել:

Ու լուսարարի աղջիկը, որ կանոնաւոր դէմք և լաւ սանդրուած մազերի առկ շատ գեղեցիկ, խոր աչքեր ունէր, պատասխանեց.

—Ես մի լաւ երգ գիտեմ:

Պատասխանելիս, նա դիտում էր պ. Բաստեանին, որ նստած ծխում էր և գուրգուրանքով նայում մէկ իր հմուլաստանին և մէկ իր Ալզասին, որը երբէք իր մոքից չէր հեռանում:

—Թէ լաւ երգ է, երգիր, ասաց Բաստեան: Բայց ասա տեսնեմ, արդելումն է:

—Մասաութ:

—Այդ դէպքում երեսդ գարծրու անտառի կողմը. շատ քիչ անգամ ոստիկանները ման են գալիս այդ կողմերով, որովհետեւ խմիչքներ չկան:

Խոնարհած, ինչպէս կանգուն աշխատաւորները լուռ ծիծաղեցին, որովհետեւ ատելով ատում էին ոստիկաններին: Նւ գեղանի Ժիւլիէտը սկսեց երգել, իհարկէ ալգասական բարբա-

ռով—մին այն երգերից, որ շարադրում են անանուն բանաստեղծներ՝ առանց յանգերի վրայ ուշք դարձնելու:

Ձայնը, բաւական ընդարձակ, և մանաւանդ մաքուր, ասում էր.

«Ես կտրեցի Ալլասի հմուլը,
Նրանք աճել էին մեր աշխատած հողի վրայ,
Կանաչ հմուլը մերն է,
Մերն է նաև կարմիր հողը:»

—Բրավո, ասաց լրջութեամբ պ. Բաստեանի ագարակապանը:

Պ. Բաստեան բերնից հեռացրեց ծխամուրչը, որպէսզի աւելի լաւ լսէ:

Շնորանք բուսել են հովտում,
Հովտից շատ մարդիկ են անց կացել
Շատ տեսակ մարդիկ և հողմեր և փոթորիկներ,
Մենք ընտրել ենք մեր բարեկամներին:

Մենք ինչ խմենք գարեջուրը՝ ում կենաց որ հաճելի է մեզ,
Մենք բաւեր՝ չպէտք է ունենանք մեր շրթների վրայ,
Այլ բաւեր՝ մեր սրտի խորքում,
Ուր ոչ որ ոչինչ չի կարող ջնջել:

Երբ Ժիւլիէտ իր երգը վերջացրեց, երիտասարդ ու ծեր, բոլոր աշխատաւորները մի բոպէ անշարժ մնացին: Սպասում էին երգի շարունակութեան: Աղջկերանց շրթունքի վրայ ժպիտ նկարուեց Ժիւլիէտի ձայնի և ներկա կեանքի պատճառով. իսկ պ. Բաստեանի և Ռոմշապիտերի աչքերը փայլեցին անցեալի յուշերով: Երկու աղջիկները լուրջ կերպարանք էին ստացել: Ժիւլիէտ երգը չշարունակեց, որովհետև շարունակութիւն չկար:

—Ինձ այնպէս է թւում, որ այդ երգը շարադրել է աղօթեպանը, ասաց պ. Բաստեան: Դէ, բարեկամներս, շապուեցէք, Ալլէյմ մեկնող առաջին կառքը անցնում է: Պէտքէ որ բոլորը քաղուած լինի և դրուած՝ չորացնելու տեղը, նախ քան մութի ընկնելը:

Կանայք և տղամարդիկ, բացի երիտասարդ, բարձրահասակ Ֆրանսուայից, որը պէտքէնոյեմբերին իր զինուորական ծառայութիւնը կատարէր, և ստանձնել էր սայլակը վարելու գործը, նորից կուսան հմուլի տունկերի վրայ: Բայց, նոյն բո-

պէին, անտառի շուրջը աճած մացառուտքի միջից բարձրացաւ մի տղամարդու ձայն:

Ո՞վ էր անցնողը: Ո՞վ էր լսել երգը: Նրանք կարծես ճանաչեցին այդ ձայնը, որ ուժեղ էր, անհաւասար. քիչ մաշուած, երիտասարդութեան թռիչքներով: Եւ լուռեցին շշուկներ.

— Նա է: Նա չի վախենում...

Ձայնը միևնոյն բիրտ բարբառով շարունակոււմ էր.

«Ալզասի աղջկերանց գլխի սև կապը,
Կապել է իմ սիրտը ցաւի հետ,
Կապել է իմ սիրտը ուրախութեան հետ,
Դա մի սիրոյ կապ է:

«Ալզասի աղջկերանց գլխի սև կապը,
Մի թռչուն է լայն թևերով,
Նա կարող է սար ու ձոր կարել անցնել,
Եւ դիտել բարձունքներին:

«Ալզասի աղջկերանց գլխի սև կապը,
Սուգի մի խաչ է որ տանում ենք,
Ի յիշատակ նոյն մարդկանց և կանանց,
Որոնց հոգին նման է մերին:

Ձայնը ճանաչուեց: Երբ երգողը լռեց, քաղ անող աղջկերք և մարդիկ սկսեցին խօսել պ. Ուլրիխի մասին, որի Ալզասում բնակութեան վրայ հաշտ աչքով էին նայում և որը աւելի ազատ էր խօսում քան գերմանահպատակ ալզասեցիները: Հիմա լատանում ծիծաղների և խօսակցութեան աղմուկ հետզհետէ բարձրանում էր, որովհետեւ պ. Բաստեան հեռանում էր:

Նա՞ ծանր ու հաստատաքայլ բարձրանում էր մինչև անտառի եզերքը, որտեղից եկել էր ձայնը, և խորասուզւում էր կաղամախիների խիտ շարքերի մէջ: Մէկը տեսել էր նրա գնալը և սպասում էր: Պ. Ուլրիխ Բիհլէր՝ նստած՝ մի մածուպատ ժայռի կատարին, գլխաբաց, արեգակի տակ երկար քայլելուց յոգնած՝ յուսացել էր, որ երգելով՝ կարող է իր մօտ բերել իր վաղեմի բարեկամին Քոսովիէ Բաստեանին: Նա չէր խաբուել:

— Ա՛յ, քեզ համար մի տեղ եմ պատրաստել այստեղ, հմուլաքաղ. կանչեց հեռուից, ցոյց տալով մի քարակոյտ, որը ընկել էր լեռան ստորոտը, երկու ծառերի մէջտեղ և, որի վրայ նստել էր ինքը:

Թէպէտև միմիանց հետ «դու» ով էին խօսում, պ. Ուլրիխն ու Ալշէյմի դեղապետը շատ յաճախ չէին տեսնուում իրար հետ: Նրանց միջև մտերմութիւնից աւելի կարծիքների, ձգտումների և յիշատակների հանգիստութիւն կար: Նրանք ընտիր բարեկամներ էին, և վաղեմի Ալզասը նրանց հաշուում էր իր հաւատարիմ զաւակների շարքում: Այդ բաւական էր արդէն, որ նշանը հասկացուէր և տեսակցութիւնը հաճոյքով տեղի ունենար: Պ. Ուլրիխ մտածել էր, որ պ. Բաստիանը՝ իր աշխատաւորներին դործի դնելուց յետոյ, ուրախ կըլինէր մի քիչ դուարճանալով: Նա երգել էր: Ժիւլիէտի երգին պատասխանելով, և Պ. Բաստիանը եկել էր: Այժմ, Հէյտէնբրուխի ճգնաւորի դժգոյն և նուրբ՝ դէմքը ցոլացնում էր, շնորհալի և սիրալիր ընդունելութեան զգացմունքի հետ, մի ինչ որ ժողովում մի ինչ որ անհանգստութիւն, որ դժուար էր լինում թաքցնել:

— Դու դեռևս երգում ես, ասաց պ. Բաստեան, պ. Ուլրիխի ձեռքը սեղմելով. դու որսի ես դուրս գալիս, թափառում սար ու ձոր:

Նւ փչելուց յետոյ նստաւ քարի վրայ, ոտքերը կախ արած մացառների մէջ և երեսը ուղղած դէպի մացառածածք, անտառախիտ կողերով լիւր:

— Ըստ երևոյթին այդպէս է, այո: Ես մի թափառիկ եմ, մի անտառաշրջիկ: Իսկ դու, ընդհակառակը, ամենից քայլող մարդն ես: Ես ման եմ գալիս, դու մշակութեամբ զբաղուած ես... Լսի՛ր ինձ Քսավիէ, ես քեզ հետ ուզում եմ խօսել իմ սրտի շատ մօտիկ մի հարցի մասին:

Պ. Բաստեանի ծանր դէմքը սարսուաց, շարժուեցին նրա խոշոր շրթունքները, և դատելով նրա դէմքի վրայ առաջ եկած խոր փոփոխութիւնից, կարելի էր հաստատապէս ասել, որ նա շատ դիւրսողած մարդ է: Նւ որովհետև, առ հասարակ, սովորութիւն չունի անձնատուր լինելու սրտաբաց խօսակցութեան, ոչ մի պատասխան չտուեց պ. Ուլրիխ: Սպասում էր:

— Ես ուզում եմ յանձնարարել մի դատ, որը համարեալ իմ դատն է: Նա, որ ինձանից խնդրեց քեզ հետ խօսել, իմ ամենասիրելի ազգականն է... Քսավիէ ես քեզ հետ մանուածապատ խօսել չեմ սիրում, գուշակել ես, որ իմ բրոջս սրդին, Ժանը, սիրում է քո աղջկան, Օդիլին:

— Այո:

— Էլ ի՞նչ:

Նրանք որ դիտում էին դէպի հեռուն, յանկարծ նայեցին միմիանց աչքերի մէջ և սարսափեցին. որովհետև մին մերժում

էր կարդացել, իսկ միւսը ցաւ որ պատճառելու էր իր մերժումը:

—Ո՛չ, ասաց պ. Բաստեան դիտմամբ բարձր, յաղթահարելու համար յուզուածին, որ դողացնում էր ձայնը, ո՛չ, չեմ կարող:

—Ես գիտէի որ պիտի մերժես... Բայց եթէ միմիանց սիրած եմ...

—Գուցէ... չեմ կարող:

—Երեւի դրա համար ունես մի շատ լուրջ պատճառ:

—Այո:

—Այսինքն...

Պ. Օրերէլէ, ծառերի միջից մատնացոյց արեց Օրերլէնների տան ճակատը:

—Այսօր, այդ տունը պէտք է այցելէ Ստրազըուզի նահանգապետը:

—Ես արտօնութիւն չունէի դրա մասին քեզ որեւէ բան յայտնելու, պարտաւոր էի սպասել, մինչև որ իրողութիւնը հրապարակուէր:

—Արդէն հրապարակուած է: Ամբողջ Ալլէյմ գիւղը գիտէ այդ մասին Օրերլէնների ծառաներից: Հաստատապէս ասում են մինչև անգամ, որ պ. դը Կասսվեցը գնում է Լիւսիէնի ձեռքը խնդրելու իր քրոջ որդու տեղակալ Ֆոն Ֆարնուլի համար:

—Գիտեմ:

Եւ դու ուզում ես, որ...

—Այո:

—Որ աղջիկս տամ Ժան Օրերլէնին, որպէսզինա առաջիկայ ընտրութիւնների ժամանակ կառավարական թեկնածու եղող մի անձի իրրե կետրմայր և Պրուսիայի մի սպայի իրրե տալմայր ունենայ:

Պ. Ուլրիխ պ. Բաստիանի զայրացած նայուածքի առաջ չխոնարհեցրեց իր աչքերը և պատասխանեց.

—Այո: Դրանք նրա համար մեծ տանջանքներ են. բայց Ժանն թնչով է մեղաւոր: Ո՞րտեղ պիտի գտնես մի փեսացու աւելի արժանի քեզ և քո աղջկայ համար:

—Ի՞նչ արեց նա հակառակուելու համար իր քրոջամուսնութեան: Նա բացակայ չէ: Նա իր լուսթեամբ վաւերացրեց այդ ամուսնութիւնը... Նա կամքի տէր չէ...

Պ. Ուլրիխ նրան կանգնեցրեց ձեռքի մի շարժումով:

—Ո՛չ, նա տկարակամ չէ:

—Ո՛չ քեզ պէս, որ կարող եղար գոնէ փակ պահել քո տան դռները:

— Ես իմ տան տէրն եմ:

— Իսկ ես իրաւունք ունեմ ասելու, ոչ ինձ պէս: Այդ բոլոր նորեկուկ երիտասարդները շատ ղիջողութիւններ յանձն են առնում, բարեկամս: Ես քաղաքականութեամբ չեմ զբաղուում: Ես լուռ եմ: Հերկում եմ միայն իմ Ալզասի հողը, Գիւղացիները, անտարակոյս թէև ինձ սիրում են, բայց դարձեալ, երկիւղով, կասկածանքով են վերաբերում դէպի ինձ. նրանց կարծիքով ես սկսում եմ արդէն վտանգիչ (compromettant) դառնալ: Առանց ուղղութեան և դիրքի խտրութեան՝ բոլոր գերմանացիները ինձ ասում են: Բայց, Աստուած գիտէ, որ այդ ամենը փոխանակ ինձ վրայ ազդելու, փոխանակ ինձ ստիպելու որ կարծիքներս փոխեմ, ընդհակառակը աւելի է ամրապնդում իմ համոզումները: Ես կը մեռնեմ իմ հին ոխերով, լսում ես, միշտ ատելով Գերմանիային...

Նրա աչքերը փայլատակում էին, ինչպէս մի զինուորի, որ՝ վստահ իր հրացանածգութեան վրայ, իր դիմացն ունի իր թշնամուն:

— Քո սերունդը ուրիշ էր, Քասպիէ: Բայց այնուամենայնիւ չպէտք է անարդար լինել: Այդ փոքրիկը, որին մերժում ես տալ քո աղջիկը, թէպէտև մեզ չէ նմանում, բայց, պէտք է խոստովանել, որ նա ազնիւ, արի սրտի տէր է:

— Օրինակի համար:

— Միթէ՞ նա չպնդեց, որ գերմանական աղմինիստրացիայի մէջ չի ցանկանում բնաւ ծառայել:

— Որովհետև Ալզասը նրան աւելի դուր է գալիս, ինչպէս նաև իմ աղջիկը:

— Ո՛չ դրա համար, այլ որովհետև նա կրում է ալզասական հոգի:

— Հաւատացնում եմ քեզ, որ ոչ մեղ նման:

— Նոր ձևով, այո՛. Նրանք հարկադրուած են ապրելու գերմանացիների մէջ, ստանում են գերմանական դաստիարակութիւն գերմանական գեղնագիտաներում, և Ֆրանսիան սիրելու նրանց եղանակը աւելի պատուաւոր է, նրանք կամքի և և հոգու աւելի մեծ ուժ են ցոյց տալիս, քան մենք, մեր ժամանակներում: Մտածիր որ երեսուն տարի է անցել արդէն Ալզասի դրաւումից:

— Աւանդ:

— Եւ նրանք ոչինչ չեն տեսել մեր ժամանակներից, նրանց հայրենասիրութիւնը աւանդութեան, երևակայութեան կամ արիւնակցութեան արդիւնք է միայն. մանաւանդ որ ուրացման օրինակները բազմաթիւ են նրանց շուրջը:

— Ճիշտ է, ժաման էլ տեսաւ իր շուրջը այդ օրինակներէց:

— Ահա ինչպէս համար դու պէտք է աւելի արդար լինես դէպի նա: Մտածիր, որ եթէ աղջիկդ նրա հետ ամուսնանայ, այստեղ կը հիմնուի աղասական մի շատ հարուստ շատ ուժեղ ընտանիք... Դը ֆարնովը ամենակին չի կարող ընակուել ոչ Ալշէյմում, ոչ էլ երկար ժամանակ Ալգասում... շուտով նրա անունը միայն կը մնայ...

Պ. Բաստեան իր ծանր ձեռքը դրեց պ. Ուլրիխի ուսի վրայ, և մի այնպիսի շեշտով, որը անհնար է դարձնում խօսակցութեան շարունակութիւնը:

— Լսիր ինձ, բարեկամս, ես մի խօսք միայն պիտի ասեմ: Այդ ամուսնութիւնը չի կարող տեղի ունենալ, որովհետեւ ես չեմ ուղում, որովհետեւ իմ սերնդի մեռած թէ կենդանի անդամները ինձ կը դատապարտէին դա համար... Եւ յետոյ, եթէ մինչև անգամ ես զիջէի, իմ տանը կայ մէկը, մի կամք, մի աւելի դժուար կամք քան իմը, որ բնաւ «այո» չպիտի ասէ, բնաւ, լսում ես...

Պ. Բաստեան իշաւ մատուռների մէջ և ուսերը բարձրացնելով և գլուխը թափ տալով, ինչպէս մէկը, որ ոչինչ չի ուզում լսել, գնաց դէպի իր մշակները: Երբ քաղուած հմուլի շարքերի միջից անցաւ և իր աշխատաւորներից իւրաքանչիւրին յանդիմանեց, էլ, ոչ ոք չծիծաղեց, այլ Ալշէյմի աղջկերքն ու ագարակացանի որդիքը, և ագարակացանը ինքն իսկ, արեգակի տակ խոնարհած, որը հետզհետէ կիզիչ էր դառնում, լճու շարունակեցին իրանց զուարթութեամբ սկսած աշխատանքը:

Պ. Ուլրիխ արգէն դնում էր դէպի Սէնտ-Օգիլի իր ճգնարանը, վշտահար, խորհելով՝ թէ ի՞նչ մեծ ազդեցութիւն պիտի գործէ պ. Բաստեանի մերժումը ժանի ճակատագրի վրայ, և երկիւղ կրելով գոյժը տալու իր քրոջ որդուն: Առանց յուսալու, առանց հաւատարմութեան, որ կայ դեռևս յաջողութեան ակնկալութիւն, նա մտածում էր թէ ի՞նչ միջոցով կարելի է արդեօք Օգիլի հօրը համոզել. և ծրագրները բոլորում էին իր մտքի շուրջը, ինչպէս խալթոցաւոր մեծ ճանճերը կադնիների շուրջը, որ հետևում էին ուղևորին նրա դանդաղ վերելքի ժամանակ: Հեղեղները երգում էին: Այլևայլ թռչունները ծլււրում կապոյտ օդի մէջ, թռչկոտում դէպի այգիներն ու պտղատու ծառերը: Բայց իզուր: Պ. Ուլրիխ տխուր էր, մեռնելու աստիճան տխուր: Նա մտածում էր միայն իր քրոջ որդու մասին, որը անհայդ ձևով էր վարձատրւում Ալշէյմ վերադառնալուն համար: Ճանա-

պարհի դարձուածքին, ծառերի արանքից դիտում էր Օրերլէների տունը:

Այդ բոլորէն այդ տունը մանողը տարօրինակ կերպով լուռ պիտի դառնէր: Ամենքը տառապում էին այնտեղ: Պ. Ֆիլիպ Օրերլէ, իր սովորութեան համեմատ, ճաշել էր իր սենեակում: Տիկին Օրերլէ, իր ամուսնու բացարձակ հրամանի համաձայն, յանձն էր առել իջնել իր սենեակից դիմաւորելու համար պ. դը Կասսըվեցին, երբ դարձ Բիայց և այնպէս, ես պէտք է նախապէս ձեզ յայտնեմ, ասել էր նա, որ չեմ կարող նրա առաջ հազար կտոր լինել, սիրալիկ երեւում համար նրան: Ես ակամայ ներկայ պիտի լինեմ նրա ընդունելութեան, որովհետեւ ինձ ստիպում էր: Ես ոչ մի խօսք չեմ փոխանակի նրա հետ:

— Լաւ, թող այդպէս լինի, պատասխանել էր պ. Օրերլէ: Լիւսիէնը, ժանը, ես կը խօսենք նրա հետ: Մեր խօսելը բաւական է: Գործարանատէրը ճաշից անմիջապէս յետոյ գնացել էր իր աշխատասենեակը. որը գտնւում էր պարկի ծայրը: Ժանը, որ ոգևորուած տրամադրութիւն չէր ցոյց տալիս, դուրս էր եկել նոյնպէս, խոստանալով որ ժամի երեքից առաջ տանը կը լինի: Հետեալքար Լիւսիէնը մենակ էր դեղին սրահում: Շատ լաւ հագնուած՝ վարդեր էր դետեղում բլրերիցայ բաժակների կամ յախճապակեայ թափանցիկ, դժոյն ծաղկամանների մէջ, որոնք հակադասելիք էին կազմում կարծր ու յստակ երանգներով թաշեալ կահկարասիների հետ: Լիւսիէն զուարթ ու անդորր հոգի ունէր այն խաղացողի նման, որը տեսնում է խաղի շահով վերջանալը: Վերջին օրերը, Ստրազբուրգում տեղի ունեցող երկու երեկոյթների ընթացքում, նա ինքը անձամբ բանակցել էր այն պայմանների մասին, որով կարելի էր՝ կնքել ամուսնութիւնը, և մնում էր միայն որ երկու կողմերը ստորագրեն համաձայնութեան տակ: Ամուսնութեան պայման էր պաշտօնապէս դնել պ. Ժորճէֆ Օրերլէի թեկնածութիւնը Ալլասում, հէնց որ տեղ բացուեց: Պ. դը Կասսըվեցի այցելութիւնը համահաւասար էր դաշնագրի տակ ստորագրելուն: Հակառակորդները լուռ էին, ինչպէս օրինակ տիկին Օրերլէ, կամ հեռու կանգնած՝ խոլում էին ինչպէս օրինակ պապը: Ջահէլ աղջիկը վառարանի մօտից գնում էր ոսկեզօծ հայելակալի մօտ, և ինքն իրան դիտում էր հայելու մէջ, փորձում էր թէ արդիօք իր շրթունքները սիրուն ձևով պիտի շարժուեն երբ ասէր. «Պարոն նահանգապետ»: Մի բան միայն նրան զայրացնում էր, փչացնում իր յաղթութեան գոռոց հաճոյքը. ամենքը փախուստ էին տուել նրանից:

Ծառաներն անգամ կարծես խօսք մէկ էին արել բացակայ

լինել, երբ կարիք ունէին նրանց: Զանգահարութիւնները ապարդիւն էին մնում: Այնպէս որ պ. Ժողէֆ Օրերլէ ստիպուել էր, ճաշից յետոյ դնալ իր հօր սենեկապանին, գիրուկ, բարի ալղասեցուն գտնել, որպէսզի ծառայութիւնը կատարէ:

—Վիկտոր, հաճունեցէ՞ք ինչպէս հարկն է, որպէսզի ընդունէք այն անձին, որ պէտք է գայ ժամի երեքին:

Վիկտոր կարմրել էր և պատասխանեց վշտով.

—Այո, պարոն:

—Պէտք է ուշադրութիւն դարձնէք, թէ երբ է դալիս կառքը և պատրաստ կանգնէք վերնադասթի ստորոտում:

—Այո, պարոն:

Այդ խոստումից ի վեր, որը անկասկած վերաւորում էր Վիկտորի խորին համոզմունքը, այս վերջինը փախուստ էր տալիս, ծլկում էր, և դալիս էր միայն երեք կամ չորս անգամ կանչելուց յետոյ, բոլորովին շուարած, պատճառաբանելով որ չէ լսել:

Ստրադրուրդի նահանգապետը պէտք է այցելէ: Այդ խօսքը, որ անդադար կրկնում էր Լիւսիէն, խոր մտածմունքի մէջ էր ընկղմել տրիկին Օրերլէին, որը փակուել էր իր սենեակում և խորհրդածում էր: Իսկ նա ծանրանում էր, փոթորկալից ամպի նման, Ալգասի նախկին բողոքարկու պատգամաւորի, Ֆիլիպ Օրերլէի ուղեղի վրայ, որը հրամայել էր իրան բոլորովին մեռնակ թողնել. այդ խօսքը ներվային ցնցումներն էր պատճառում պ. Ժողէֆ Օրերլէի մատներին, որ սղոցաբանի գրասենեակում նստած՝ գործի նախակներ էին գրում, և երբեմն երբեմն ընդհատելով աշխատանքը մտիկ էր անում: Նա հնչում էր ցաւագին կեբալով, որպէս մահադանգը մի աղնիւ բանի, ժանի սրտում, որ ապաստանել էր Բաստեանի ազարակապանների մօտ. նա կազմում էր թէման, լէյտմօտիւլը, որի շուրջը դառնում էր զանազան ձևերի տակ, հմուլ քաղոդների կենդանի, խայթող խօսակցութիւնը:

Որովհետև ազարակի կանայք և աղջիկը, և առաւօտեան, հմուլաստանում աշխատող բանուորուհիները կէսօրուայ ճաշից յետոյ հաւաքուել էին Ռամշալսէրների ազարակի նեղ ու երկար բակում, աթոռների կամ բարձր նստարանների վրայ նըստած, իւրաքանչիւրի կողքին, կազմում, մի կողով կամ մի դամբիւղ, և ձախակողմում մի տէգ հմուլ, նրանք ծաղիկները ջոկում էին ցողուններից: Կազմում էին երկու շարք. մէկը՝ գոմի պատերի երկարութեան, միւսը՝ տան երկայնքին: Եւ առաջ էր դալիս խարտեալ գլուխների և շարժուն իրանների մի ծառուղի, տերեւների կոյտերի մէջտեղ, որ ձգւում էր մի կնոջ

մօտից միւսը և միացնում էր նրանց որպէս մի ծաղկեպսակ...

Աւելի ուժգին, քան առաւօտեան, հոռւաստանում, բարձրանում էին ծիծաղները, հարցերն ու դատողութիւնները, որոնք ծնունդ էին տալիս բազմաթիւ պատասխանների: Այդ բոլոր ծիծաղների և կատակների առիթ էին տալիս աշխատանքը, մի հարկանի կամ հարկանուհու անցքը՝ փողոց և արեգակից սպիտակացած հրապարակից, և մանաւանդ օրուայ երկու դէպքերը. նահանգապետի այցելութիւնն ու Լիւսիէնի հաւանական ամուսնութիւնը:

Գեղանի ժիւլիէտը, լուսարարի աղջիկը, բաց էր արել խօսակցութիւնը, ասելով.

— Ես ձեզ ասում եմ, որ Վիկտորն է պատմել այդ՝ որ մտադրի տղուն: Նահանգապետը պէտք է որ դայ կէս ժամից: Ի՞նչ, կարծում էք որ տեղիցս կը շարժուեմ, երբ նահանգապետն անց կենայ:

— Նա կը տեսնէր մի չափազանց սիրուն աղջկան, ասաց Օգիւստէն Ռամպալիսը, աշխատելիս: Այդ դէպքում միայն տղաները իրանց ցոյց պիտի տան:

Իգա, Օկտավի, Ռէն պատասխանեցին ծիծաղելով:

— Ուրեմն ես էլ չեմ շարժուի տեղիցս: Ո՛չ էլ ես: Ո՛չ էլ ես:

Մի պառաւի ձայն—միակ պառաւը, որ օդնում էր ջահէլ աղջկերանց—մուտաց.

— Գիտեմ որ Պօղոս, Պետրոսի չափ աղքատ եմ, բայց հազար անգամ կը նախընտրէի որ նահանգապետը ուրիշների տունն այցելէր, քան ոտք դնէր իմ բնակարանը:

— Անկասկած:

Գին և տղամարդ, խօսում էին ազատօրէն: Բառերը ուսուսուտում էին պատերի մէջտեղ և բարձրաձայն ծիծաղների ու քաշընկած, ձմրւած տերևների աղմուկի հետ դնում կորչում էին: Կամուրջի տակ, կիսաստուների մէջ, ծնօտը ձեռներին յեռած նստել էր սակայն մէկը, որ վկայ էր այդ բոլորին. դա Ժան Օբերլէն էր: Բայց Ալէէյմի բնակիչները սկսել էին արդէն ճանանչել երիտասարդին, որովհետեւ հինգ ամսից ի վեր նա ապրում էր իրանց մէջ: Գիտէին, որ նա կրում էր թունդ ալգասեցու ոգի: Ներկայ դէպքում գուշակում էին, որ Ժանը ապաստանել էր Բաստեանների ագարակապանի մօտ, որովհետեւ դատապարտում էր հօրը անափառութիւնը, որին զոհում էր պ. Ժողէֆ Օբերլէ այնքան բաներ ու այնքան անձերի: Ժանը եկել էր իբրեւ թէ մի քիչ հանգիստ առնելու և արեգակից պատապարտելու համար բայց իսկապէս նա խոյս էր տուել Լիւսիէնի ներկայութիւնից, որի յաղթանակը նրա համար մի տանձնօրէն էր, 1905.

ջանք էր: Եւ սակայն նա դեռ ևս տեղեկութիւն չունէր այն խօսակցութեան մասին, որ տեղի էր ունեցել առաւօտեան իր մօրեղբօր և պ. Բաստեանի միջև: Օդիլի մտածումը շարունակ ներկայանում էր իր դժբախտ հոգու առաջ, բայց նա շարունակ հեռացնում էր այդ մտածումը ինքն իրան չկորցնելու համար, որովհետեւ քիչ յետոյ պէտք պիտի ունենար իր ամբողջ ողջամտութեան և արիութեան: Երբեմն նա դիտում էր աշխատողներին և ջանք էր գործ դնում շահագրգռուելու նրանց աշխատանքով և նրանց խօսակցութեամբ. յաճախ նա կարծում էր լսել կողքի աղմուկ և կիսով չափ վեր էր կենում, յիշելով՝ որ խօսք էր տուել տանը գտնուել, երբ պ. դը Կասսըվեցը գար:

Ժիւլիէտի ձայնը, անկասկած ոգևորուած՝ շարունակեց.

— Ինչ կարիք ունի Ալէքսի՞ գալու Ստրագբուրգի այդ նահանգապետը: Մենք առանց գերմանացիների աւելի երջանիկ ենք ապրում:

— Նրանք երդուել են իրանց ատելի դարձնել, աւելացրեց ազարակապանի մեծ աղջիկը, որ աշխատող կանանց հմուլ էր բաժանում, երբ նրանք սպառում էին իրանց պաշարը: Այսպէս, ինչպէս երևում է, նրանք արգելում են, որքան կարող են, ֆրանսերէն խօսել:

— Օրինակ ուզում էք, այ իմ հօրեղբօր որդին Ֆրանսուա Ժօզէֆ Շտէյգէրը, ասաց փոքրիկ Ռէնը, գերձակի աղջիկը. Մի ոստիկան պնդում էր, որ իբրեւ թէ նա բղաւել է մի պանդուկում. «Կեցցէ ֆրանսիան»: Եթէ չեմ սխալւում, իմ հօրեղբոր որդին այդ մի երկու խօսքից աւելի ֆրանսերէն չգիտէր: Բայց այդքանն էլ բաւական էր. և երկու ամիս բանտ նստեց:

— Քո հօրեղբոր որդին նորից բղաւէլ է: Ապա թնչ կասես, եթէ պատմեմ, որ Ալբերտ Վէյլէրում արգելել են մի երաժշտական ընկերութեան ֆրանսիական լեզուով կտորներ նուագել:

— Իսկ անցեալ օր Ստրագբուրգ եկող ֆրանսիացի աճապարի գլխին պատահածի մասին ինչ՞ պիտի ասէք: Չէ՞ք լսել: Լրագրները գրեցին: Թոյլ են տուել որ սրահը վարձէ, փողը վճարէ, յայտարարութիւնները տպէ և յետոյ յանկարծ ասել են. «Բարեկամս, կամ պէտք է քո խեղկատակութիւնները գերմաներէն լեզուով ասես և կամ պէտք է ծլկուես»:

— Բայց դրանք դեռ ոչինչ. այն ինչ որ պատահել է պ. Հասսին, որմնանկարչին, մարդու խելքովն սւ. մտքովն անգամ չէ կարող անցնել:

— Իսկապէս, ի՞նչ է պատահել:

Նա գիտէր որ բոլորովին արգելուած է խանութների ճա-

կատին ֆրանսերէն որևէ արձանագրութիւն նկարել: Պ. Հասար, որին ես շատ լաւ եմ ճանաչում, յանձն չէր առնի իր վրձինով մի բառ անգամ գրել ֆրանսերէն: Բայց նա կարծել էր, որ կարող է գտնէ վերանորոգնել մի նշանացոյց տախտակի արձանագրութիւնը, ուր վաղուց իվեր գրուած էր. «Շապկավաճառանոց»: Կանչել են պ. Հասարին և սպառնացել են ատենագրութիւն կազմել, որովհետև նա յանդգնել էր պահպանել իր ներկով մի արձանագրութիւն... Ա՛յ, այս հոկտեմբերին պատահեց այդ դէպքը:

—Օ՛հ, օ՛հ. երեակայեցէք ռեքան գոհ պիտի լինէր պ. Համբը, եթէ անձրևը, քամին կամ կայծակը փչացնէր նրա պանդոկի նշանատախտակը, որի վրայ դեռ ևս գրուած կայ. Սպիտակ Աղաւնին:

Ագարակապանի կինը նոյն ըոպէին երևաց տան շէմքի վրայ. ծերունի ժողէֆինը ասաց նրան.

—Դժբախտ Ալզաս: Մեր երիտասարդութեան ժամանակ ռեքան ուրախ էր նա: Այնպէս չէ՞, տիկին Ռամշախէր:

—Այո՛. այժմ մի որևէ չնչին պատճառով մարդկանց արտաքսում են, դատի են ենթարկում, բանտ են գցում. ամեն կողմ ոստիկանութիւնը պատել է:

—Լաւ կանհա ձայնդ քեզ քաշես, գոչեց Ռամշախէր, կըշտամբանքով:

Կրտսերը, ֆրանսուան, պաշտպանեց մօրը, և պատասխանեց.

—Այստեղ մատնիչ չկայ: Եւ յետոյ, միթէ կարելի է լռել: Նրանք չափիցն անց են կացել: Ահա դրա համար է, որ այնքան երիտասարդներ գաղթում են:

Իր մութ անկիւնից, ժան դիտում էր այդ բոլոր ջանել գլուխները, որոնք կրակոտ աչքերով լսում էին, ոմանք՝ անշարժ և ուղղածիդ, ուրիշներ՝ խոնարհելով և բարձրանալով հմուլի տէգերի վրայ:

—Փոխանակ այդքան շատախօսելու, լաւ չի՞ լինի որ աշխատէք, ասաց նորից տիրոջ ձայնը:

Հարիւր եօթանասուն ըմբոստ, դատապարտուած Սովէռնի դատարանից, մի օրուայ ընթացքում, անցեալ յունուաւին, բացականչեց ժիւլիէտ, մի ծիծաղով, որ ցնցեց նրա մազերը: Հարիւր եօթանասուն:

Ֆրանսուա, բարձրահասակ, ծոյլ ու տձև երիտասարդը, որ այդ ըոպէին բոլորովին մօտեցել էր ժան Օրբրէին, չորացնելու տախտակի վրայ թափեց մի մեծ սակառ հմուլ և, յետոյ ծռուելով.

—Սահմանն անցնելու լավագոյն ճանապարհն է Մեծ-Աղբիւրը, ասաց ցածր ձայնով: Իսկ ամենայարմար անցքը, պարոն Օրեւրէ, Մեծ Աղբիւրի և Մինիէռի մէջտեղից... Ֆրանսիական սահմանը այդ տեղից շատ մօտ է, ճիշտ դիմացն է գտնւում. բայց պէտք է զգուշանալ անտառապանից և մաքսային պաշտօնեաներից: Երբեմն նրանք կանգնեցնում են մարդկանց և հարցնում են, թէ ուր են գնում:

Ժան սառստաց: Խնչ էր ուղում ասել Ֆրանսուան: Սկսեց խօսել.

—Ո՞ւմ էք աս...

Բայց երիտասարդ գիւղացին շուռ էր տուել երեսը, և շարունակում էր աշխատանքը: Անկասկած նա խօսքն ուղղել էր իրան...

Ժան խռովուել էր այդ խօսքերից:

Մի սուր ձայն աղաղակեց.

—Ահա կառքը մտաւ գիւղ: Նա կանցնի պ. Բաստեանի ծառուղու առաջից:

Բոլոր աշխատողները բարձրացրին իրանց գլուխը:

Փոքրիկ Ֆրանսէլը կանգնել էր այդ սիւնի առաջ, որ բռնում էր դարպասի բաց դուռը: Ամբողջ մարմնով կուցած ցանկապատի վրայ, խճուճ մագերը հողմից տարուբեր, նա դիտում էր դէպի աջ, որտեղից գալիս էր մի կառքի անիւների ձայնը: Բակում կանաչք դադարել էին աշխատելուց: Նրանք մրմռում էին. «Նահանգապետը: Ահա նահանգապետը... Հիմա կանցնի»:

Ագարակապանը, որին՝ կանանց յանկարծական լուռ-թիւնը, ինչպէս և փոքրիկի ձայնը սթափեցրել էր զբաղմունքից, դարձաւ դէպի բակը, ուր հմուլաքաղ կանաչք անշարժ ականջ էին դնում մօտեցող ձիերի և անիւների աղմուկին: Նա հրամայեց.

—Ֆրանսէլ, դարպասի դուռը փակիր: Եւ աւելացրեց մոլտալով.

—Ձեմ ուղում որ տեսնէ իմ տան ներսը:

Փոքրիկը հրեց փեղկերից մէկը, յետոյ հետաքրքրուած՝ ճակատը առաջացնելով.

—Օհ, տարօրինակ է: Գոնէ չի կարող ասել որ շատ մարդիկ նրան դիմաւորել են, նա շատերն է տեսել իր ճանապարհի վրայ... Ո՛չ ոք չէ շարժուել իր տեղից... Միայն գերմանուհիները դուրս են թափուել, և այդ բնական է... Նրանք բոլորն էլ կանգնել են Արագիլ հիւրանոցի մօտ...

—Պիտի փակեա թէ ոչ, դռաց ագարակապանը զայրացած:

Այս անգամ Յրանձէլ հնազանդուեց: Երկրորդ փեղկը աղմկով ընկաւ. միւսի վրայ, Բակում հաւաքուած քսան հոգիները լսեցին կառքի աղմուկը, որ թաւալում էր Ալշէյմ գիւղի լուռ ու ամայի փողոցներով: Ապակիների ետեւից, մութ անկիւններից միայն դիտում էին. ոչ ոք չէր դուրս գալիս շէմքի վրայ, և պարտէզներում, ծաղկէթմբերը հերկողները այնքան խորատուգուած էին երևում իրանց աշխատանքի մէջ, որ ոչինչ ու չադրութիւն չէին դարձնում անցնող կառքերի վրայ:

Երբ կառքը ագարակից յիսուն մետր հեռացաւ, բոլորը մտքով թռան դէպի Օրէրլէնների ծառուղին, հեռուն, գիւղի միւս ծայրում, և վեր առնելով մի բուռ հմուլի ճիւղ, կանայք և աղջկերք հետաքրքրուած իրանք իրանց հարց էին տալիս, թէ ի՞նչ պէտք է անէ պ, Օրերլէի որդին, և նրանք զաղտագողի նայեցին դէպի կաթնոցը:

Նա այնտեղ չէր:

Գնացել էր, չդժբելու համար իր խոստումը, և վազած լինելով՝ հակառակ վազելին, հասնում էր դժգոյն, բանջարանոցի դրան առաջ, հէնց այն ըռպէին, ուր նահանգապետի ձիերը, տան միւս կողմից մտնում էին պարկի վանդակադռներից ներս:

Ամբողջ տունը իմացել էր արդէն նահանգապետի գալը: Լիւսիէն և տիկին Օրերլէ նստել էին վառարանի մօտ: Նրանք ոչ մի խօսք չէին փոխանակում միմիանց հետ: Գործարանատէրը, կէս ժամից աւելի է վերադարձել էր արդէն իր աշխատասենեակից և հազուստները փոխած, դիտում էր պատուհանի լայն բաց արած փեղկերից կառքի դալն ու օձապտոյտ դառնալը պարկի մարգագետինների շուրջը:

Իր ծրագիրը անհ իրագործուած էր: Պաշտօնական անձը, որ մտել էր իր տան դռներից ներս, բերում էր իրան, պ. Օրերլէն, զերմանական բարեհաճութեան ապացոյցը: Մի վայրկեան հպարտութեան մի ամպի մէջ, որով նա սառսուաց, իր երևակայութեան առաջ ցցուած տեսաւ Ռայխստագի պալատը...

—Մօնիկ ասաց յետ դառնալով, շնչառպառ, կարծես մի երկար վաղքից յետոյ, արդեօք ձեր որդին վերադարձել է վերջապէս, թէ ոչ:

Նա առաջ, դեղին բազկաթոռում, վառարանի մօտ նստած նրբամարմին տիկին Օրերլէն պատասխանեց, յուզումից ամբողջ դիմագծերը պրկուած.

—Նա ներկայ կը լինի, քանի որ խոստացել է:

—Փաստը, պարզ փաստը այն է, որ նա այստեղ չէ, իսկ կոմս դը Կասսըվեցի կառքը արդէն ներս մտաւ... Իսկ Վիկտորը, երեւի նա վերնագաւթի առաջ է, կոմսի գալը ծանուցանելու համար, ինչպէս ես նրան պատուիրել էի:

—Երեւի:

Պ. Ժոզէֆ Օբերլէ, կատաղած՝ այն բռնի պատասխաններէց որ տալիս էր նրան իր կինը, այն խուլ ընդդիմութիւնից, որին նա հանդիպում էր իր իւրաքանչիւր քայլին, անցաւ սրահով, ուժգնութեամբ քաշեց հին զանգակի կապը, և բաց անելով սրահաթի դուռը տեսաւ, որ Վիկտորը իր տեղում չէր:

Նա պարտաւորուեց ետ քաշուել, որովհետեւ սանդուխտներէց վեր բարձրացող քայլերի աղմուկը խառնուում էր զանգի վերջին թրթռումներէց:

Պ. Ժոզէֆ Օբերլէ գնաց կանգնեց վառարանի մօտ, երեսը դարձրած դէպի դուռը, իր կնոջ կողքին: Քայլերը ճգնում էին աւաղը՝ զրանիտեայ սանդուխի աստիճանների վրայ:

Զանգի ձայնից մէկը եկել էր վերջապէս: Դուռը բացուեց. մի բոպէ յետոյ Օբերլէ նշմարեց Սալօմէ խոհարարուհուն, մեղրամոմի նման սպիտակ, ատամները սեղմած, որ անխօս բաց էր անում դուռը և պ. դը Կասսըվիցին, որ նրան քսուելով, մըտնում էր:

Այդ անձը՝ շատ բարձր հասակով, շատ լայն ուսերով սեղմուած էր մի ըրդենգօտի մէջ: Դէմքը բաղկացած էր երկու տարբեր տարրերից. դուրս ընկած ճակատ, կլոր այտոսկրներ, կլոր քիթ, յետոյ, յօնքերը, որոնք միացած, կպած էին և որոնց մազերը բիզ բիզ կանգնած էին, նոյնպէս և բեխերը, կարճ, սրածայր մօրուքը, որոնք դէպի առաջ, օդի մէջ ցցուած էին: Այդ սրութիւններով և կլորութիւններով կազմուած դէմքը ոգևորուած էր երկու ծակող, անհանդարտ աչքերով, որոնք պէտք է որ կապոյտ լինէին,—քանի որ մազը տեղին էր—բայց որ միշտ թաղուած էին մնում մութի մէջ, որովհետեւ ցից յօնքերը ստուեր էին գցում նրանց վրայ և որովհետեւ մարդը սովորութիւն ունէր ծալծել իր թերթերունքը: Մազերը՝ քունքերի վրայ ցանցառ, յանկարծ խտանում էին ենթագանգից (occiput) մինչև ականջների ներքև:

Պ. Ժոզէֆ Օբերլէ մի քանի քայլ առաջ եկաւ և ասաց դերմաներէն լեզուով:

—Պարոն նահանգապետ, մեծ պատիւ է մեզ համար ձեր այցելութիւնը... իսկապէս նեղութիւն կրել...

Պաշտօնեան բռնեց և սեղմեց Օբերլէի երկարած ձեռքը: Բայց նրան չնայեց, և կանգ չառաւ: Սրահի թաւ գորգի վրայ նրա

քայլերը շարունակեցին հնչել: Նրա հայեացքը ուղղուած էր, դէպի վառարանի անկիւնը, սուգի զգեստներ հագած նըրամարմին կիներ: Եւ իր հսկայ իրանը մի քանի անգամ կռացնելով, շտկելով բարեկեց:

— Պարոն կոմս դը Կասսըվեց, ասաց պ. Օրբերլէ, որովհետեւ նահանգապետը երբէք չէր ծանօթացել տանտիրուհու հետ:

Տիկին Օրբերլէ գլխի թեթեւաբով բարեկեց և ոչ մի բառ չարտասանեց: Պ. դը Կասսըվեց ուղղուեց, մի վայրկեան սպասեց, յետոյ համակերպուելով իր դրութեան, սշխատեց ինքն իրան զուարթ ցոյց տալ, բարեկեց Լիւսիէնին, որը շառագունուել էր և ժպտում էր:

— Ինձ թուած է որ օրիորդի հետ ծանօթ ենք արդէն նորին գերազանցութիւն քաղաքագլխի տնից, պատասխանեց: Ճիշտ է, Ստրազբուրգը Ալլէյմից շատ մօտ չէ, բայց ես այն կարծիքի եմ, որ արժէ այսքան հրաշալի տեսարաններ վայելելու համար ճանապարհորդել, պարոն Օրբերլէ...

Գոհունակութեան մի ծիծաղ արծաեկեց և նստեց դիվին բազմոցի վրայ, դէմքը վառարանի կողմը դարձրած: Յետոյ, խօսքն ուղղելով գործարանատիրոջը, որը նստել էր իր կողքին, հարցրեց.

— Սրդեօք ձեր պարոն որդին բացակայ է:

Պ. Օրբերլէ, անձկագին, լսողութիւնը սրած մտիկ էր անում մի բոպէից ի վեր: Վերջապէս նա կարողացաւ պատասխանել.

— Ահա նա, պարոն նահանգապետ:

Արդարեւ նոյն բոպէին ներս էր մտնում երիտասարդը: Առաջին անձը, որին նա տեսաւ, մայրն էր: Դրա համար փոքր ինչ վարանեց: Նրա կրակոտ, դիւրագգաց աչքերը, ներվային մի քթթում ունեցան, որպէս թէ վիրաւորուած լինէին: Անմիջապէս նա շուռտուեց երեսը դէպի բազմոցը, սեղմեց ձեռքը, որ երկարում էր այցելուն, և, լուրջ, նուազ շփոթուած քան հայրը, և աւելի սառնարիւնութեամբ, ասաց ֆրանսերէն.

— Ես դուրս էի եկել մի փոքրիկ զբօսանք կատարելու համար, պարոն նահանգապետ: Ես վազնիվազ եկայ, որպէսզի ուշ չմնամ, որովհետեւ հօրս խոստացել էի ներկայ գտնուել ձեր այցելութեան ժամանակ:

— Չափազանց սիրալիրութիւն ձեր կողմից, ասաց պաշտօնեան ծիծաղելով: Մենք ձեր հօր հետ գերմաներէն էինք խօսում. բայց ես կարող եմ արտայայտուել մեր ազգային լեզուից դուրս ուրիշ բարբառով:

Նա շարունակեց խօսքը Ֆրանսերէն, իւրաքանչիւր բառի առաջին վանկերի վրայ շեշտ դնելով.

— Պարոն Օրերլէ, ես հիացած եմ ձեր պարկով. և նոյն-իսկ Ալէէյմի այս փոքրիկ երկրով: Շատ շատ սիրուն է... Ինձ թոււմ է որ դուք շրջապատուած էք մի քաւական հիւրամերժ, յամենայն դէպս, համարեա անտեսանելի ազգաբնակչութեամբ, որովհետեւ, քիչ տուա՞յ, գիւղի միջից անցնելով, հազիւ հազ մի մի հոգու նշմարեցի:

— Նրանք դաշտ են գնացել աշխատելու:

— Ո՞վ է գիւղապետը:

— Պ. Բաստեանը:

— Այո, յիշում եմ, ըստերեւոյթին մի յետաճնաց ընտանիք...

Պաշտօնեան՝ գլուխը մի արագ, զինուորական շարժումով դարձնելով դէպի երկու կանանց և ժանի կողմը, հարցաքննուած էր հայեացքով նրանց դէմքը: Երեք պատասխան միաժամանակ լսուեցին.

— Յետաճնաց, այո, տաաց Լիւսիէնը, յետագէմ գաղափար-ներ ունեն, բայց ազնիւ մարդիկ են:

— Հին սերունդի մարդիկ են պարզապէս, ասաց տիկին Օրերլէ:

— Մանաւանդ շատ արժանաւոր, ասաց ժան:

— Այո, գիտեմ թէ ինչո՞ւ համար...

Նահանգապետը մի խուսափողական շարժում գործեց:

— Ի՛նչ որ է... Բաւական է, որ ուղիղ ընթացքի հետեւէն...

Հայրը օգնութեան փութաց, բանն անուշ կապելու համար:

— Մենք հետաքրքիր շատ բաներ չունենք, որպէսզի ձեզ ցոյց տանք, պարոն Նահանգապետ, բայց գուցէ կը կամենայիք տեսնել իմ գործարանը: Նա մարդկանցով լիքն է և կենդանի, հաւատացնում եմ ձեզ: Հարիւր բանուոր, թաւալուող մեքենաներ, քսան մետր երկարութեամբ կաղնիներ, որոնք, երեք բաւէում, տախտակի վերածուած դուրս են գալիս մեքենայի տակից: Ուզո՞ւմ էք այցելել, տեսնել այդ բոլորը:

— Իսկապէս հետաքրքիր է:

Սօսակցութիւնը այսպէս ուրիշ նիւթի շուրջը դառնալով, նուազ ճնշող բնաւորութիւն ստացաւ: Սօսեցին Օրերլէների գործարանի ծագման, Վոփերի անտառների հայթայթած փայտի, ծառ կտրելու Ֆրանսիական և գերմանական եղանակների և մի շարք այս կարգի հարցերի մասին, և ամենքը մի մի խօսք ասացին խօսակցութեան մասնակից եղան: Լիւսիէն ոգևորուեց.

տիկին Օրերլէ ստիպուած եղաւ իր ամուսնու հարցերին պատասխանել. ժան նոյնպէս խօսեց. Պաշտօնեան գոհ էր երևում իր այցելութիւնից:

Լիւսիէն՝ հօրը մի նշանի վրայ վեր կացաւ, որպէսզի զանգը տայ, սենեկապանին կանչէ և զովարար ըմպելիներ պահանջէ: Բայց մի քայլ անգամ անելու ժամանակ չունեցաւ:

Դուռը բացուեց, և Վիկտոր, այն ծառան՝ որ քիչ առաջ իր պաշտօնի պուխը չէր, երևաց, բոլորովին կարմրած, շփոթուած և աչքերը դետին խոնարհած: Նրա ձախ թւին յենուած գալիս էր պապը՝ պ Ֆիլիպ Օրերլէ, որքան կարելի է հասակը ուղիղ բռնած:

Սօսակցող հինգ հոգիները ոտքի վրայ էին: Ծառան կանգ առաւ. դռան առաջ և հեռացաւ: Ծերունին մենակ ներս մտաւ իր գաւազանի վրայ յենուելով: Պ. Ֆիլիպ Օրերլէ հագել էր այն դեղեցիկ զգեստները, որ հագնում էր առողջութեան ժամանակ: Հագել էր սիւրտիւկ, ըտինդօտ, որի կոճակները չէր կոճկել. լամբակից անցրել էր Պատւի Լէգէօնի կարմիր ժապաւէնը: Բռուն յուզումը կերպարանափոխ էր արել նրան: Կարծես քսան տարով երիտասարդացել էր: Նա առաջ էր գալիս փոքրիկ քայլերով, մարմինը մի քիչ առաջ խոնարհած, բայց գլուխը բարձր ու պինդ բռնած. նա դիտում էր միայն մէկին, գերմանացի պաշտօնեային, որ կանգնել էր բազմոցի մօտ: Նրա դժուարաշարժ ծնօտը դողդողում էր, պրկում էր, ասես բառեր էր արտասանում, որոնք չէին լսւում:

Պ. Ժոզէֆ Օրերլէ սխալուեց, թէ ուզեց այդ անակնկալ այցելութեան տարբեր կերպարանք տալ: Դարձաւ դէպի պ. դը Կասսըվեցը, որ զարմացած մնացել էր և ասաց.

— Պարոն նահանգապետ, հայրս ահա անակնկալ ուրախութիւն է ընծայում մեզ իր սենեակից վար իջնելով. ես չէի սպասում այդ անակնկալին:

Նախկին պատգամաւորի աչքերը, իրանց ծանր կոպերի տակ լայն բացուած, չէին հեռանում գերմանացուց, որ լաւ, անխռով էր պահում իրան և լուռ մնում:

Երբ պ. Ֆիլիպ Օրերլէ մօտեցաւ պ. դը Կասսըվեցին, կանգ առաւ: Այն ժամանակ իր ձախ ձեռքով, որը ազատ էր, սիւրտիւկի գրպանից հանեց և կոմս դը Կասսըվեցին երկարեց քարետախտակը, որի վրայ երկու տող բան էր գրուած: Այս վերջինը խոնարհուեց և ծառացաւ կանգնեց.

— Պարոն:

Պ. Ժոզէֆ Օրերլէ խլել էր արդէն քարետախտակի նուրբ շերտը և կարդում էր հետեւեալ տարօրինակ բառերը:

«Սա իմ տունն է, պարոն»

Ծերունի ալգասեցու աչքերը աւելացնում էին. «Կորէք այստեղից»։ Եւ նրանք երբէք չէին խոնարհուում։ Երբէք չէին բաց թողնում թշնամու օձիքը։

—Սյա արդէն չափազանց է։ Ինչպէս, հայր իմ, դուք դալիս էք այստեղ իմ հիւրերին նախատելով... Իհարկէ դուք կը ներէք, պարոն, հայրս ծեր է, տաք-գլուխ, և հասակի շնորհիւ մի բիչ պղտորուած...

—Եթէ դուք մի բիչ աւելի երիտասարդ լինէիք, պարոն, ասաց իր հերթին պ. դը Կասսըվեց, գործը քաղցրութեամբ չէր վերջանայ... Եւ լաւ կանէք յիշելով, որ դուք էլ իմ տանն էք, Գերմանիայում, գերմանական հողի վրայ և խելացիութիւն չէ, նոյնիսկ ձեր տարիքում, նախատել իշխանութիւնը...

—Հայր, ասաց տիկին Օրբըլէ թռչելով դէպի ծերունին, նրան պահելու համար... աղաչում եմ... Ձեր հիւանդութիւնը ծանրացնում էք... Սա չափազանց զօրեղ յուզում է ձեզ համար...

Արդարեւ, տեղի էր ունենում, մի անընական երևոյթ։ Պ. Ֆիլիպ Օրբըլէ իր բուռն զայրոյթի մէջ ոյժ էր առել և կանգնել էր բոլորովին ուղիղ։ Նա հսկայական երևոյթ էր։ Նոյն հասակը՝ ինչ որ պ. դը Կասսըվեցը։ Բռունցքների երակները ուռչում էին. այտերը արիւնով կարմրում, աչքերը շանթ արձակում։ Եւ միևնոյն ժամանակ, այդ կիսամեռ մարմինը դողդողում էր և սպառում՝ իր գիւրարեկ կեանքը՝ ակամայ շարժումներով։ Նա մի նշան արեց տիկին Օրբըլէին, որ հեռու կանգնի և իրան չբռնէ։

Լիւսիէն դժգունած, բարձրացրեց ուսերը, մօտեցաւ պ. դը Կասսըվեցին.

—Սա մեր ընտանեկան ողբերգութեան դեսպաններից մէկն է, պարոն։ Ուշք մի դարձնէք և եկէք մեզ հետ գործարան։ Թողէք որ անցնեմ պապ։

Ծերունին անուշադիր թողեց Լիւսիէնին։ Լիւսիէն, մարտահրաւէր երևոյթով անցաւ պ. Ֆիլիպ Օրբըլէի և պաշտօնեայի մէջտեղից, որը պատասխանեց.

—Ինձ հասցրուած նախատինքի պատասխանատու չեմ բռնում ձեզ օրիորդ... Ես ըմբռնում եմ դրութիւնը, հասկանում ես։

Ձայնը, սեղմուած կոկորդից դժուարութեամբ էր դուրս գալիս։ Կատաղած՝ գլխի կէս մասով՝ բացի պ. Ֆիլիպ Օրբըլէից, ամենքից բարձր կանգնած, ամենքին տիրապետելով՝ պ. դը Կասսըվեց շուռ եկաւ կրունկների վրայ և առաջացաւ դէպի դուռը։

— Եկէք, խնդրում եմ, ասաց պ. Ժողէֆ Օրերլէ, ճանապարհը ցոյց տալով նահանգապետին: Լիւսիէնն արդէն դուրս էր եկել: Տիկին Օրերլէ՝ յուզմունքից նոյնքան հիւանդացած՝ որքան այդ ծերունին, որ մերժում էր իր օգնութիւնը, արտասունքից համարեա շնչահեղձ եղած, վաղեց մինչև սրահակը և բարձրացաւ իր սենեակը, ուր հեծեծազին լաց եղաւ:

Սրահում մնաց միայն Ժան՝ ընտանիքի ակտը պետի հետ, որը արտաքսել էր իր տնից օտարականին: Նա մօտեցաւ ծերունուն.

Պնայ, այդ ի՞նչ արեցիր:

Նա ուզում էր ասել. «Դա մի սարսափելի նախատինք էր: Հայրս այդ բանը երբէք չի ներիլ: Ընտանիքը ամբողջապէս խորտակուած է:» Ժան ուզում էր այս խօսքերն ասել: Բայց աչքերը բարձրացրեց դէպի այդ վաղեմի մարտիկը, որ մօտ էր ուժասպառ լինելու և սակայն կարողանում էր դեռևս դիմադրել, յուզմունքին: Տեսաւ, որ այժմ պապը նայում էր իրան շեշտակի, որ նրա դայրոյթը հասել էր իր ծայրագոյն աստիճանին, որ կուրծքը ելեէջ էր անում, որ դէմքը ծամածուռում էր և գալարուում: Եւ, յանկարծ, դեղին սրահում, մի արտասովոր ձայն, մի խեղդուած, բիրդ, հզօր ու ժանգոտած ձայն աղաղակեց, ներվային զարհուրելի ցնցումով.

— Կորիւր, կորիւր, կորիւր, կորիւր:

Ձայնը բարձրացաւ մինչև ամենասուր նոտերը: Յետոյ փշրուեց: Եւ, բերանը դեռ ևս բաց, ծերունին դողողջեց և ընկաւ գետին:

Ձայնը թնդացել էր տան ամենախուլ անկիւններումն անդամ: Տիկին Օրերլէ ճանաչեց այդ ձայնը՝ որ առյաւէտ լըռութեան էր դատապարտուել, և իր սենեակի բաց թողնուած դռնից կարողացաւ լսել խօսքերը: Պ. Ժողէֆ Օրերլէ նոյնպէս լսել էր կատաղութեան ու տառապանքի այդ ձայնը, պարտիզում, սղոցարանի մօտ: Մի բոպէ, յօնքերը կիտած՝ շուռ էր տուել դէմքը, դէպի տան կողմը, մինչդեռ գործարանի գերմանացի վերակացուներն ու բանուորները ողջունում էին իրանց կեցցէներով պ. դը Կասսըվեցին:

Սրահ շտապեցին նախ տիկին Օրերլէ, յետոյ Վիկտոր, յետոյ պառաւ Սալօմէն, որ միանգամայն դժգունած և ձեռքերը վեր բարձրացրած՝ ասում էր. «Միթէ սա պ. Ֆիլիպի ձայնը չէր:» յետոյ կառավարը և պարտիզպանը, որոնք վարանում էին առաջ գալու, թէպէտև շատ էին հետաքրքրուած այդ տաժանելի տեսարանով: Նրանք ժանին և նրա մօրը գտան ծնկաչոք՝ պ. Ֆիլիպ Օրերլէի մօտ, որը հագիւ կարողանում էր շնչել և գը-

տնւում էր կատարեալ ընկճուած դրութեան մէջ: Քայքայիչ ճիգը, յուզմունքը, զայրոյթը սպառել էին անկարի ուժերը: Վերցրին նրան, նստեցրին մի բազկաթոռի մէջ և իւրաքանչիւրը ամեն հնարք գործ դրեց կենդանացնելու հիւանդին: Մի քառորդ ժամ ամբողջ առաջին յարկեց սրահ, սրահից առաջին յարկը վազվզեցին: Բերում էին քացախ, այլևալ դեղեր, եթեր:

— Ես գիտէի որ պարոնը դարձեալ կաթուած պիտի ունենար, ասում էր Վիկտոր, այս առաւօտեանից իվեր նա չէր կարողանում իրան զսպել: Ա՛հ, վերջապէս շարժում է մի քիչ իր աչքերը... Ձեռները մի քիչ տաքացել են:

Պարկի խորքէից թնդաց մի ողորմ.

— Կեցցէ պարոն նահանգապետը:

Ձայնները՝ գաղճ հողմի հետ մտան սրահ, ուր մինչև այդ օրը՝ երբեք այդպիսի խօսքեր չէին հնչած: Պ. Ֆիլիպ Օրերլէ կարծես չլսեց: Բայց և այնպէս, մի քանի՝ ըռպէ յետոյ նշան արեց որ իրան տաննն իր սենակը:

Շտապով մէկը բարձրացել էր սանդուխի աստիճաններից և դեռևս ներս չմտած հարցրեց.

— Ի՞նչ է պատահել նորից: Ինչո՞ւ համար էին այդ աղաղակները... Ա՛հ, հայր:

Նա իսկոյն ձայնի շեշտը փոխեց, և ասաց.

— Ես կարծեցի, որ դուք էք Մօնիկ, ներվային տաճնապ էք ունեցել... Բայց այդ դէպքում ո՞վ արձակեց այդ տարօրինակ աղաղակը:

— Նա:

— Նա, հարցրեց պ. Օրերլէ, այդ անկարելի է:

Չհամարձակուեց հարցումը կրկնել. Հայրը՝ ոտքի կանգնած՝ ժանի և սկսեկապանի օգնութեամբ, դողդողալով և դանդաղելով՝ դալիս էր սրահից դէպի դուռ:

— Ժան, ասաց տիկին Օրերլէ, լաւ հսկիր պապիդ վրայ, մի հեռանայ նրա մօտից: Նա անա դալիս եմ:

Ամուսինը պահել էր նրան ճանապարհին: Նա ուզում էր հեռացնել ժանին: Երբ մինակ մնաց պ. Օրերլէի հետ, — սանդուխի գլխին, լսում էին դեռևս ոտնաձայներ, շրջադեպտի և հագուստի ըզանցքի շրշիւններ, պատուէրներ, «վեր բարձրացրէք. ուշադրութիւն սանդուխի դարձուածքի վրայ...»

— Ի՞նչ բղաւեց, հարցրեց գործարանատէրը:

— «Կորիւր, կորիւր» աղաղակեց: Յաճախ է ասում այդ խօսքերը, դուք գիտէք...

— Որ այդ խօսքերով է միայն նա արտայայտում իր անուշադրութիւնը... Ուրիշ բան չասմց:

—Ո՛հ, շտապով ներքև իջայ և փռուած գտայ նրան գետնի վրայ, նրա մօտ կանգնել էր Ժանը...

—Բարեբախտաբար, պ. դը Կասսըվեց հանդիսատիս չեղաւ այդ արարուածին: Առաջինը բաւական էր... Իսկապէս ամբողջ տունը դաշնակցել է, այդ այցելութիւնը—անքան պատուաբեր մեղ համար—գայթակղութեան և նախատինքի մի առիթ դարձնելու: հայրս, Վիկտորը, որ չամաչեց մեղսակից լինել այդ դառանցող ծերունուն, Ժանը, որ անպատկառութեամբ վերաբերուեց դէպի հիւրը, դուք...

—Ես կարծում էի որ դուք ինձանից տրանջալու ոչինչ պատճառ չպիտի ունենայիք:

—Դժգոհութեան առաջին պատճառը հէնց դուք էք: Դժուր էք այս դիմադրութեան հոգին, որը ես պիտի խորտակեմ... Պիտի խորտակեմ, հաւատացած եղէք...

—Իմ խեղճ բարեկամ, ասաց ձեռքերը միացնելով, դուք դեռ ևս այդ հին երգը չէք մոռացել:

—Երբէք:

—Դուք անկարող էք ամեն բան խորտակել, աւանդ:

—Այդ կը տեսնենք:

Տիկին Օրերլէ չպատասխանեց, և շտապով բարձրացաւ առաջին յարկը: Մի նոր մտահոգութիւն, աւելի ճնշող քան իր ամուսնու սպառնալիքներից վախը, նրան չարչարում էր. «Ի՞նչ էր միտքը կեսրարիս, մտածում էր: Այդ ծերունին զառանցանքի մէջ չէ բնաւ... Նա չէ կորցրել իր յիշողութիւնը. նախատեսում է. հսկում է տան վրայ, նա միշտ խելօք է մտածում... Նրանի թէ Ժանը ինձ նման հասկացած չլինէր...»

Սանդուխի դիւին պատահեց որդուն, որ պապի սենեակից էր դուրս գալիս:

—Ի՞նչ լուր:

—Վախենալու ոչինչ չկայ, կարծում եմ: Դրութիւնը աւելի լաւ է. ուղում է մենակ մնալ:

—Իսկ դժւ, հարցրեց մայրը, անձկագին, բռնելով որդու ձեռքից և տանելով նրան նրա սենեակը: Իսկ դժւ:

—Ի՞նչպէս թէ, իսկ Բո:

Նրբ Ժան սենեակի դուռը փակեց, նա կանգնեց իր առաջ և պատուհանի լոյսի մէջ դէմքը բոլորովին սպիտակացած, աչքերը սևեռած իր որդու աչքերին:

—Դու հասկացար, չէ՞, պապի ասածը:

—Այո:

Տիկին Օրերլէ փորձեց ժպտալ, և դա տանջուած հոգու այդ ճիգը աւելի ճմլող տպաւորութիւն դործեց:

—Այո, նա աղաղակեց, «Գորբը», այնպէս չէ: 'Իա մի խօսք է, որ ասել է յաճախ օտարականներին: Նա խօսքն ուղղում էր պ. դը Կասսըվեցին... Ձեռն հաւատում:

Ժան Թափ էր տալիս գլուխը:

—Եւ սակայն սիրելիս, ուրիշ հիմ կարող էր ուղղել խօսքը...

Ներողութիւն, նա ինձ էր ուղղում խօսքը:

—Դու գոհուել ես: Դուք միմիանց հետ այնպէս բարեկամներ էք, քո պատն ու դու...

—Աւելի լաւ:

—Միթէ նա ուզում էր քեզ վռնդել սրանից:

Ո՛չ

—Ուրեմն, էլ ի՞նչ:

—Նա հրամայում էր ինձ թողնել այս տունը:

—Ժան:

Եւ սակայն, խեղճ մարդը հրճուել էր Ալշէյս վերադառնալու տեսնելով:

Ժան դադարեց մօրը նայելուց, որովհետեւ արցունքները ցայտել էին տիկին Օբերլէի աչքերից, որովհետեւ նա աւելի ևս ժօտեցել էր իրան և բռնել էր իր ձեռքերը

—Ո՛չ, իմ Ժան, ո՛չ, նա չէր կարող այդպէս խորհել... Հաւատացնում եմ քեզ, որ դու սխալ հասկացար... Յաճախ դէպս դու չեմ թողնի ինձ... Ասա, որ չես թողնելու ինձ երբէք...

Նա մի ըտպէ սպասեց պատասխանի. բայց իզմուր:

—Ժան, իսէր Աստուծոյ, գթա ինձ, պատասխանիր... Խոստացիր ինձ, որ չես թողնելու մեզ... Օ՛հ, Աստուած իմ, ի՞նչ կը լինէր այժմ մեր տունը առանց իմ որդուն... Ես, որ քեզանից բացի ոչ ոքին չունեմ... Ի՞նչ, միթէ ես բաւական դժբախտ չեմ... Ժան, ինձ նայիր...

Ժան էլ չկարողացաւ դիմանալ: Մայրը իր որդու աչքերը տեսաւ, որ լցուած էին խանդաղատանքով:

—Ես քեզ սիրում եմ իմ ամբողջ հոգով, ասաց Ժան:

—Դիտե՛մ: Բայց մի հեռանայ:

—Ես խզում եմ քեզ և պատկառում քեզանից:

—Մի հեռանայ:

Եւ որովհետեւ ոչինչ չէր պատասխանում, տիկին Օբերլէ բաժանուեց նրանից:

—Դու չես ուղղում խոստանալ: Դու, դու էլ գութ չունես: Դու նմանում ես...

Նա պատրաստուում էր ասել «Հօրը»: Ժան մտածեց. «Ես

կարող եմ նրան մի քանի շաբաթ խաղաղութիւն պարգևել, ես պարտաւոր եմ այդպէս անել: Եւ ասաց, ջանք գործ դնելով իր հերթին ծիծաղելու:

— Ես ձեզ խոստանում եմ, մայրիկ, միայն հսկումբեր 1-ին լինել Սէն-Նիկոլայի զօրանոցում: Ես ձեզ խոստանում եմ... Գոհ եք:

Մայրը նշան արեց որ ոչ Բայց Ժան, համբուրելով նրա ճակատից, և աւելի ոչինչ չասելով՝ հեռացաւ շտապով...

Այլէյմ գիւղը այժմ խօսում էր Օբերլէնների տանը տեղի ունեցած տեսարանի մասին: Երեկոյեան խեղտող շոգի մէջ տղամարդիկ վերադառնում էին դաշտերից քայլելով. երեխաներն ու երիտասարդները՝ ձի հեծած. ձիերի պոչը, Վոժերի ուսի վրայից, մայր մտնող արեգակի թափած բոցավառ լոյսի մէջ երևում էին ոսկերանդ կամ արծաթագոյն, սև կամ շառագոյն: Կանայք սպասում էին իրանց մարդերին դռների շէմքի վրայ, և, երբ նրանք մօտենում էին, գնում էին նրանց ընդ առաջ, մի բոպէ աւելի շուտ հաղորդելու համար խոշոր լուրը. «Գիտե՞ս ի՞նչ պատահեց գործարանում: Այնպիսի բան, որի մասին պիտի խօսեն և շատ երկար: Ասում են պ. Ֆիլիպի լեզուն բացուելէ զայրոյթից և դուրս է արել պրուսիացուն իր տանից»:

Գիւղացիներից շատերը ասում էին.

— Կնիկ, յետոյ կը պատմես, յետոյ, երբ տուն վերադառնանք և դուռը մեր ետևից փակենք:

Ոմանք՝ մտահոգութեամբ նկատելով հարեանների և հարեանուհիների յուզմունքը, ասում էին.

— Մրա վերջը այն կը լինի, որ ոստիկանութիւնը կը կոխէ մեր գիւղը:

Պ. Բաստեանի ազարակում, կանայք և ջահէլ աղջկերք վերջացրել էին հմուլի քաղը և շաղակրատում էին դեռևս, ծիծաղկոտ կամ մտատանջ նայած նրանց, տարիքին: Ազարակապանը հրամայել էր, որ փակ պահեն գիւղի փողոցի վրայ բացուող դուռը: Նա, հակառակ իր զուարթ արաքինի՝ զգոյշ, խոհեմ, շարունակում էր աշխատանքը: Եղներն ու ձիաները՝ բակի մօտից անցնելիս, շնչում էին օդը և մեկնում էին իրանց վիղը դէպի առաջ:

— Եւ հմուլաքաղ անող կանայք հետզհետէ վեր կենալով թափ տուին իրանց գոգնոցները, և յոգնած, ձգելով իրանց մատաղ բազուկները, յօրանջելով զովացած օդի մէջ, մեկնեցին դէպի իրանց աւելի կամ պակաս հեռու տները, ընթրիքի սեղանի շուրջը հաւաքուելու համար:

Ընթրիքի ժամը հնչեց և՛ Օրերլէների մօտ: Ոչ մի ժամանակ ճաշը այդքան կարճատև և այդքան թաղծալից չէր եղել: Հաղիւ մի երկու բառ փոխանակուեց: Լիւսիէն մտածում էր այն արգելքի մասին, որ ցցւում էր իր ամուսնական ծրագրի առաջ և այն բուռն ցասման մասին, որ զգացել էր պ. Վր Կասսըվեց. ժան այն դժոգքի մասին, որ դարձել էր ընտանեկան յարկը. պ. Օրերլէ իր համարեա կործանուած փառասիրական երազներին մասին: Խիկին Մօնիկ իր որդու հաւանական մեկնումի մասին: Ընթրիքն աւարտելու մօտ, այն ըոպէին, երբ ծառան հեռանում էր, պ. Օրերլէ սկսեց, կարծես շարունակելիս լինէր կիսատ թողնուած մի խօսակցութիւն.

— Միրելիս, ինչպէս գիտէք, ես սովորութիւն չունեմ, տեղի տալու բնութեան առաջ: Ուժը ինձ զայրացնում, կատաղեցնում է միայն, ուրիշ ոչինչ: Հետեաբար ես վճռել եմ երկու բան. նախ՝ շինել տալ մի երկրորդ տուն ատաղձաբանի մօտ, ուր կարողանամ մենակ լինել, իմ տանը. յետոյ շտապեցնել Լիւսիէնի ամուսնութիւնը տեղակալ Ֆօն Ֆարնովի հետ: Ո՛չ դուք, ոչ հայրս, և ոչ էլ աշխարհի վրայ որ և է մէկը կարող կըլինի խանգարել ինձ: Եւ ես, այն մասին գրել եմ արդէն նրան, Ֆարնովին:

Պ. Օրերլէ՝ դէմքի միւսնոյն գրգռիչ անհամարձական արտայայտութեամբ յաջորդաբար նայեց իր որդուն և իր կնոջ: Եւ աւելացրեց.

— Պէտք է որ այդ ջահէնները կարողանան միմիանց հետ տեսակցել ազատօրէն, որպէս նշանածներ...

— Օ՛հ, ասաց տիկին Օրերլէ, դեռ...

— Որպէս նշանածներ, շարունակեց, քանի որ այդ է իմ կամքը և սկսած՝ այս երեկոյեանից: Իմ որդուժը մազաչափ անդամ չի փոխուի... Իժբախտաբար ես չեմ կարող այնպէս անել, որ նրանք միմիանց հետ տեսակցեն այստեղ: Հայրս, դո՛ւ—ցոյց տալով որդուն—կամ դուք—ցոյց տալով կնոջը—կարող էիք մի նոր սկանդալ ստեղծել:

— Միտալու՜մ էք, ասաց տիկին Օրերլէ: Ես սարսափելի կերպով տանջւում եմ այս ամուսնութեան պատճառով, բայց ես անկարող եմ ոչ մի սկանդալ ուրբելու և արգելք լինելու այն բանի դէմ, որ դուք վճռել էք:

— Ուրեմն, շարունակեց պ. Օրերլէ, ահա ձեզ առիթը ապացուցանելու ձեր ասածը: Ես մտադիր էի ոչինչ չխնայել ձեզանից, և ինքս առաջնորդել Լիւսիէնին Ստրադբուրգ, մի երրորդ անձի մօտ, որը իր տանը պիտի հաւաքէր նշանածներին:

— Ես երբէք այդ պատուին արժանի չեմ եղել:

—Ընդունում էք, կ'ընկերանամք ուրեմն ձեր աղջկան:

Մի բոպէ մտածեց, փակեց աչքերը և ասաց.

—Անկասկած:

Ջարմանքի մի արտայայտութիւն խաղաց ամուսնու, ժանի և Լիւսիէնի դէմքի վրայ:

—Ձափազանց ուրախ եմ, որովհետև իմ տանելը այնքան էլ դուր չէր գալիս ինձ: Շատ ասելի բնական է, որ դուք տանէք ձեր աղջկան: Բայց, ի՞նչ էք մտածում, Քրտեղ պիտի ընտրէք ձեր ժամադրավայրը:

Տիկին Մօնիկ պատասխանեց.

—Օրերէի իմ տունը:

Ապշուրեան մի շարժում, միաժամանակ իրանց տեղից վեր թոցրեց հօրն ու որդուն: Օրերէի տոնը, Բիւրկընների տոնը: Դոնէ որդին ըմբռնեց մօրն արած զոհողութիւնը, վեր կացաւ ու համբուրեց նրան խանտաղատաբէր: Պ. Օրերէ ասաց անձամբ.

—Լաւ, Մօնիկ: Շատ լաւ: Ե՞րբ յարմար էք դատում:

—Երբ որ պ. դը Ֆարնովին լուր տաք: Դուք ինքներդ կորոշէք ժամը և օրը: Նորից գրեցէք նրան, երբ որ պատասխան ստանաք ձեր նամակին:

Լիւսիէն, որքան որ էլ իր մօր համար քնքուշ զգացմունքներ չէր տածում, այդ երեկոյեան մօտեցաւ նրան: Փոքրիկ սրահում, ուր ժանեակ էր հիւսում, երկու ժամ անընդատ նստաւ տիկին Օրերէի կողքին, ուշադրութեամբ հետևեց կամ աշխատեց հետևել այդ կնճռուած, ակոսացած, բայց դեռ ետ այնքան դիւրաշարժ ու այնքան արաայայտիչ դէմքի վրայ ժրտածմունքների ելևէջներն: Բայց յաճախ մարդ հոգիները կարդում է միայն կիսով չափ: Ո՛չ Լիւսիէնը, ոչ էլ ժամը անկարող եղան զուշակելու այն պատճառը, որ մղել էր յոգնած տիկին Օրերէն յանձն առնել այդպիսի զոհաբերութիւն:

(Կը շարունակուի)